ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

9 (78)

ԵՐԵՎԱՆ

2016

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 9 (78), 2016

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների և Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի կառավարման ամբիոնների դասախոս, տ.գ.թ.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Էդուարդ Լ.Դանիելյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ.Կարապետյան
ՀՀ վարչապետ, տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.

Վահագն Ազլյան
«Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Աթոյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի նախագահ, տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալներ
Վահագն Ազլյան
Վարդան Աթոյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Կարեն Վերանյան
Վահրամ Հովյան

Էջադրող-ձևավորող
Տաթևիկ Քարաուղլանյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 9 (78), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Հարությունյան
Անգլո-ամերիկյան տեղեկատվական գործողությունները
համաշխարհային պատերազմներում 5

Սամվել Մարտիրոսյան
Հայաստանում ինտերնետի միջին օգտատերը
շարունակում է խոցելի մնալ հարձակումներից 13

Գագիկ Հարությունյանի հարցազրույցը
«Տեղեկատվական պատերազմներն այսօր» թեմայով 18

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Հրայր Փաշայան
ԼՂՀ արտաքին քաղաքականությունը. 2016թ. հոկտեմբեր 22

Հրայր Փաշայան, Լիանա Բալայան
1991-ի ԼՂՀ անկախության հանրաքվեն և հետաձգված հանրաքվեի գաղափարը
ղարաբաղյան կարգավորման գործընթացում 28

Ջոնի Մելիքյան
Վրաստանի արտաքին քաղաքականությունը. 2016թ. հոկտեմբեր 35

Ռոման Կարապետյան
Իրանի արտաքին քաղաքականությունը. 2016թ. հոկտեմբեր 41

Անուշավան Բարսեղյան
Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը. 2016թ. հոկտեմբեր 49

Հայկ Գաբրիելյան
Թուրքիայի արտաքին քաղաքականությունը. 2016թ. հոկտեմբեր 56

Հուշագիր հեղինակին 64

Տեղեկատվական անվտանգություն

ԱՆԳԼՈ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ

Գագիկ Հարությունյան[*]

Արդի ժամանակաշրջանում ընթացող տեղեկատվական պատերազմներում կիրառվող գործողությունների մեթոդներից շատերը մշակվել են դեռևս նախորդ դարում: Այդ խնդրում կարևոր դերակատարում ունեցան տեղեկատվական գործողություններ իրագործող կառույցները, որոնք ձևավորվեցին համաշխարհային երկու պատերազմների ընթացքում: Կարելի է արձանագրել, որ այդ ոլորտում ամենաարդյունավետ գործում էին Մեծ Բրիտանիան և Միացյալ Նահանգները: Այդ իսկ պատճառով նրանց փորձի համառոտ ներկայացումը, թերևս, հրատապ է նաև այսօր:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում առաջին անգամ ստեղծվեցին հատուկ պետական կառույցներ, որոնց գլխավոր խնդիրն էր մշակել և իրականացնել տեղեկատվա–հոգեբանական գործողություններ: Այս ոլորտում առաջատարը Մեծ Բրիտանիան էր, որտեղ ստեղծվեցին երկու նման կառույցներ: Առաջինը ձևավորվեց Պատերազմի նպատակներին հասնելու աջակցության Ազգային կոմիտեն, որի գործառույթները հիմնականում ուղղված էին ներքին լսարանին և որի նպատակն էր վարել ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքներ սեփական բնակչության հետ: Դրան զուգահեռ՝ հիմնվեց նաև Տեղեկատվության նախարարություն՝ լորդ Բիվերբրուքի ղեկավարությամբ, որի խնդիրն էր ակտիվ տեղեկատվական գործողություններ վարել Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և նրանց դաշնակից պետությունների դեմ: Այս նախարարության գործունեությունում խիստ կարևորվում էին հետախուզական բաժնի կողմից մատակարարվող տվյալների վերլուծումը և դրանց մտածված կիրառումը: Այսինքն, ինչպես Ռդիսևսի կամ

[*] «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն:

Նապոլեոնի ժամանակաշրջաններում, այնպես էլ XX դարում, հատուկ և տեղեկատվական ծառայությունները գործել են համատեղ, և այդ համագործակցությունը ժամանակի հետ ինստիտուցիոնալ բնույթ է ստացել:

Հատկանշական է, որ չնայած պատերազմական տարիներին բնորոշ կարգապահական խստություններին, բրիտանական տեղեկատվական հաղորդումների պատասխանատուները մասնագիտական և բյուրոկրատական տեսանկյունից բավական ազատ էին: Դա նաև պայմանավորված էր այն հանգամանքով, որ այդ գործողություններում ներգրավվել էին հանրահայտ գրողներ Ռեդյարդ Քիփլինգը, Հերբերտ Ուելսը, Արթուր Կոնան Դոյլը և այլք, որոնց շնորհիվ պրոպագանդիստական կառույցներում ձևավորվեց ազատ ստեղծագործական մթնոլորտ:

Նրանց կազմած տեքստերն անմիջապես հայտնվում էին մամուլում կամ ռադիոհաղորդումներում՝ խուսափելով երկար համաձայնություններ անցնելու գործառույթից: Այսինքն՝ բրիտանացիները լավագույնս ըմբռնել էին այն իրողությունը, որ տեղեկատվական գործողությունների մշակումը գիտելիքներ, ընդունակություններ և երևակայություն պահանջող ստեղծագործական աշխատանք է, իսկ նման գործունեությունն արդյունավետ է միայն այն դեպքում, երբ անձն ազատ գործելու հնարավորություն ունի:

Մասնավորապես, Տեղեկատվության նախարարությունը լայնորեն կիրառում էր ապատեղեկատվական գործողություններ՝ ելնելով, իհարկե, Բրիտանական կայսրության շահերից: Թերևս, այս վերջին հանգամանքի շնորհիվ այդ գերատեսչությունը դարձավ անգլիացի հանճարեղ գրող Ջորջ Օրուելի «1984» հակաուտոպիստական վեպի «Ճշմարտության նախարարության» նախատիպը: Ինչպես հիշում ենք, այդ նախարարությունը գործում էր «Ճշմարտությունը՝ դա սուտն է» նշանաբանով: Հատկանշական է, որ Օրուելը կանխատեսել էր նաև համակարգիչների ի հայտ գալը. նրա գրքում նկարագրված են սարքեր, որոնց օգնությամբ «Ճշմարտության նախարարության» աշխատակիցները պարբերաբար խմբագրում էին պատմությունը՝ ելնելով քաղաքական նոր զարգացումների տրամաբանությունից: Այդ առիթով նշենք, որ պատմության (և՛ սեփական, և՛ այլոց) վերաշարադրման և խեղաթյուրման մեթոդը հատկապես կարևորվում է մեր ժամանակաշրջանում և առաջնային դիրք է գրավում որոշ երկրների կողմից վարվող տեղեկատվական պատերազմներում:

Բոլոր պարագաներում պետք է արձանագրել, որ բրիտանական տեղեկատվական ծառայությունները պատերազմի ժամանակ լայն գործունեություն ծավալեցին։ Բազմացվում և տարածվում էին տարաբնույթ բովանդակություն ունեցող պաստառներ, թռուցիկներ ու անգամ կանոնավոր կերպով տպվող շաբաթաթերթեր (դրանցից մեկը կոչվում էր «Օդային սուրհանդակ» և նախատեսված էր Եվրոպայի օկուպացված տարածքներում գտնվող բնակչությանը համապատասխանորեն իրազեկելու և գոտեպնդելու համար) և այլ տպագիր արտադրանք։ Դրանք հիմնականում հետապնդում էին հետևյալ նպատակները.

- ամրապնդել սեփական բնակչության հոգեբանական վիճակը և բարձրացնել ժողովրդի ռազմական ոգին;
- հորդորել հակառակորդին հանձնվել. այս ուղղվածությունն ունեցող թռուցիկներում (որոնք միաժամանակ հանդիսանում էին անցաթուղթ հանձնվելու մտադրություն ունեցող զինվորականների համար) պատկերվում էին, օրինակ, թե որքան լավ են վերաբերվում ռազմագերիներին Անգլիայում;
- բարոյալքել հակառակորդի զինվորներին. մասնավորապես տարածվում էին բացիկներ, որոնցում պատկերազարդ ներկայացվում էին թիկունքում տիրող ցոփ բարքերն այն ժամանակ, երբ զինվորները կռվում են ռազմաճակատում;
- տեղեկացնում էին հակառակորդի զինծառայողներին այն քաղաքական և ռազմական իրողությունների և փաստերի մասին, որոնց վերաբերյալ լռում էին գերմանական իշխանությունները։

Բրիտանացիներն անընդհատ կատարելագործում էին իրենց տեղեկատվական գործողությունները և կիրառում նոր մեթոդներ։ 1918-ից նրանք սկսեցին հրատարակել թերթեր, որոնք առաջին հայացքից դժվար էր տարբերել գերմանական մամուլից։ Օրինակ, առաջին էջում տեղակայված էր լինում կայսր Վիլհելմի դիմանկարը, և անգամ նշված էր գինը՝ 10 փֆենինգ։ Սակայն, անշուշտ, նման «գերմանական թերթերը» պետք է փոքր-ինչ այլ բովանդակություն և ուղղվածություն ունենային, քան նրանք, որոնք իրոք հրատարակվում էին Գերմանիայում:

Համաձայն որոշ գնահատականների, պատերազմական գործողությունների ընթացքում բրիտանացիները տպագրել և տարածել են շուրջ 30 միլիոն ագիտացիոն նյութ: Նման զանգվածային տեղեկատվական հարձակումը բավական արդյունավետ էր և, բնականաբար, խիստ անհանգստացնում էր գերմանացիներին: Վերջիններն անգամ սպառնում էին գնդակահարել այն օդաչուներին, որոնք թռուցիկներ էին սփռում ինքնաթիռներից (եթե, իհարկե, հաջողեին խոցել նրանց ինքնաթիռը, իսկ օդաչուն կենդանի մնար): Դա, իր հերթին, դրդեց անգլիացիներին ստեղծել հատուկ անօդաչու օդապարիկներ, որոնք ավտոմատ կերպով բաց էին թողնում թռուցիկները որոշակի բնակավայրերի և տարածքների վրա: Համաձայն անգլիական աղբյուրների, պատերազմի ընթացքում ընդհանուր առմամբ պատրաստվել էր մոտ 33 հազար նման օդապարիկ:

Մեծ Բրիտանիայի և նրա դաշնակից ԱՄՆ տեղեկատվական քաղաքականությունը որակական վերելք ապրեց Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Հատուկ ծառայություններում ստեղծվեցին բաժիններ, որոնք մասնագիտացել էին տեղեկատվական գործողություններ կազմակերպելու մեջ ամենատարբեր բնագավառներում: Այսօր դասական են համարվում անգլո-ամերիկյան դաշնակիցների լայնածավալ ապատեղեկատվական գործողությունները, որոնց նպատակն էր մոլորեցնել գերմանական զինված ուժերի հրամանատարությանը՝ կապված դաշնակիցների ուժերի ափհանման հետ Սիցիլիայում և հետագայում նաև Նորմանդիայում՝ 1944թ. ամռանը:

Հաջողությունները նման լայնամասշտաբ, ռազմավարական նշանակություն ունեցող գործողություններում գրեթե անհնար կլինեին, եթե դաշնակիցները չունենային ստույգ տեղեկություններ հակառակորդի պլանների և մտադրությունների վերաբերյալ: Այս խնդրում խիստ կարևոր էր այն հանգամանքը, որ անգլիացիներն ունեին մեծ առավելություն տեղեկատվա-տեխնիկական ոլորտում, քանի որ կարողացել էին բացահայտել գերմանական հրամանատարության հրամանների և հրահանգների գաղտնագրերի բանալին, որոնք ծածկագրվում էին «Էնիգմա» (հունարեն՝ *հանելուկ*) կոչվող հատուկ էլեկտրամեխանիկական սարքերի միջոցով:

Գերմանացիների ռադիոհաղորդումների ռադիոորսումը և գաղտնազերծումը, ստացված տեղեկատվությունը համապատասխան կառույցներին և պատասխանատու անձանց հասցնելը անգլիացիներն իրականացնում էին

մանրակրկիտ մշակված սխեմայի համաձայն: Այդ համակարգում խիստ կարևորվում էր այն հանգամանքը, որ ստացված տեղեկատվությունը պետք է օգտագործվեր այնպես, որպեսզի գերմանացիները ոչ մի դեպքում չհասկանային, որ իրենց գաղտնագրումները կարդացվում են: Այլ պարագայում նրանք կփոխեին իրենց ծածկագրման մեթոդները, ինչն էապես կդժվարացներ և գուցե անգամ անհնարին կդարձներ դրանց ծածկագրման բանալու բացահայտումը: Գաղտնազերծված տեղեկատվություն ստանալու այդ համակարգը բրիտանացիներն անվանեցին «Ուլտրա»: Այս ամենի համատեքստում ամենևին էլ չափազանցություն չի կարելի համարել Անգլիայի վարչապետ Ուինսթոն Չերչիլի խոսքերն այն մասին, թե «հաղթանակը պատերազմում ձեռք բերվեց «Ուլտրա»-ի շնորհիվ»:

Երկրորդ համաշխարհայինում դաշնակիցները բավական նուրբ էին կազմակերպում իրենց աշխատանքը նաև ագիտացիոն-պրոպագանդիստական ոլորտում: Այս հարցում դաշնակիցները հենվում էին այն սկզբունքի վրա, որ հաղթանակի գրավականը հակառակորդի վերաբերյալ հնարավորինս շատ տեղեկատվություն ունենալն է, այլ խոսքով՝ նրան «ճանաչելը» (հիշենք Սուն Ցզիի ասույթները): Ելնելով իրենց կատարած ուսումնասիրությունների արդյունքներից՝ անգլո-ամերիկյան դաշնակիցները մշակել էին հակահիտլերյան գրականությունը Գերմանիայում տարածելու շատ հնարամիտ ձև, որի հենքում դրված էր գերմանացիների հոգեկերտվածքի իմացությունը:

Երբ դաշնակիցների ինքնաթիռները ռմբակոծում էին գերմանական գնացքները, նրանք ռումբերի հետ միասին նետում էին հակահիտլերյան բովանդակությամբ թերթերով լի ծրարներ: Ծրարների վրա դրված էին լինում համապատասխան գերմանական ծառայությունների կնիքները, և գրված էին լինում հասցեներ, որոնք հետախուզական ծառայությունները ձեռք էին բերում հեռախոսային տեղեկատուներից և գործակալական ցանցերից ստացված տվյալների միջոցով: Ռմբակոծություններից հետո բծախնդիր և հետևողական գերմանացիները հավաքում էին այդ ծրարները և ուղարկում հասցեատերերին: Ազդեցությունը կրկնակի էր: Թիկունքում գտնվող գերմանացիների վրա ազդում էին և՛ թերթերի հակահիտլերյան բովանդակությունը, և՛ հատկապես այն փաստը, որ այդ թերթերը նրանք ստանում էին իրենց լավ ծանոթ փոստատարների միջոցով:

Հոգեբանական-տեղեկատվական ազդեցության մեթոդները, որոնցում լայնորեն օգտագործվում էին նաև վերոնշյալ «Ուլտրա» համակարգից ստացված տվյալները, կիրառվում էին գերմանական սուզանավերի դեմ պայքարում: Օրինակ, անգլիացիները ցուցակով հրապարակեցին *բոլոր* սուզանավերի հրամանատարների անուն-ազգանունները՝ դրանց կցելով տեղեկություններ նրանց ընտանիքների անդամների և անգամ վերջինների բնավորության գծերի ու թուլությունների մասին: Արդյունավետ էր նաև անհատական ազդեցության մեթոդը, երբ ռադիոյով դիմում էին կոնկրետ սուզանավի հրամանատարին՝ տեղեկացնելով, որ նրա կինը դավաճանում է նրան իր իսկ ընկերոջ հետ, և դա կարող է հաստատել անգամ նրանց հարևանուհին՝ նշելով վերջինների անունները: Նման լուրը պետք է որ նվազեցներ ծովային սպայի՝ պարտականությունները կատարելու արդյունավետությունը:

Բրիտանական տեղեկատվական գործողություններում առանձնահատուկ տեղ էին գրավում ռադիոհաղորդումները, հատկապես *BBC*-ի (Բրիտանական հեռահաղորդման կորպորացիա), որը պատերազմի տարիներին վարում էր հաղորդումներ 7 լեզուներով: Այդ հաղորդումները լսում և պատերազմական գործողությունների մասին իրական պատկերացում էին կազմում ինչպես օկուպացված երկրներում, այնպես էլ Գերմանիայի տարածքում: Նկատենք, որ Գերմանիայում, ելնելով որոշակի նկատառումներից, իշխանությունները չէին բռնագրավել բնակչության ռադիոընդունիչները, ինչպես արվել էր պատերազմի տարիներին ԽՍՀՄ-ում: Սակայն գերմանական ծառայությունները տեխնիկական միջոցներով մասամբ «խլացնում» էին այդ հաղորդումները, իսկ «թշնամական ձայն» լսողներին բացահայտելիս ձերբակալում, որոշ դեպքերում էլ անգամ գնդակահարում էին վերջիններին:

BBC-ի հաղորդումները կարևոր էին ոչ միայն ագիտացիոն-պրոպագանդիստական տեսանկյունից: Այդ հաղորդումներում տեղ էին գտնում թվում է, թե սովորական դարձվածքներ և տեքստեր, որոնց իրական նշանակությունը և բովանդակությունը կարող էին հասկանալ և գաղտնազերծել միայն եվրոպական երկրներում նացիստների դեմ պայքարող ընդհատակյա պարտիզանական շարժման մասնակիցները և անգլո-ամերիկյան հատուկ գործակալները: Թերևս, արժանի է հիշատակման նաև այն փաստը, որ *BBC*-ի հաղորդումները հաճախ վարում էր վերը նշված «1984» գրքի հեղինակ Ջորջ Օրուելը:

Մեծ Բրիտանիայից ավելի ուշ Երկրորդ համաշխարհայինում վարվող տեղեկատվական–հոգեբանական պատերազմին միացավ նաև Միացյալ Նահանգները[1]: Ամերիկացիները չունեին հատուկ գործողությունների կատարման այն փորձը և ավանդույթները, որ ձեռք էին բերել բրիտանացիները նախորդ հինգ դարերում: Սակայն ունեին զգալի մարդկային և տեխնոլոգիական ռեսուրսներ, ինչը նրանց թույլ տվեց արագ ձեռք բերել անհրաժեշտ մասնագիտական և կազմակերպչական հմտություններ: Որպես խոշոր հաջողություն պետք է արձանագրել 1943թ. նրանց իրագործած բազմաքայլ և բազմաշերտ տեղեկատվական գործողությունը, երբ հաջողվեց Իտալիայի ռազմական հրամանատարությանը դրդել, որպեսզի նրանք չաջակցեն իրենց դաշնակից գերմանացիներին Միջերկրական ծովում, երբ անհրաժեշտություն էր ծագել տարհանելու գերմանական էքսպեդիցիոն կորպուսը Հյուսիսային Աֆրիկայից: Ամերիկացիները կարողացել էին համոզել իտալացիներին, թե իբր գերմանացիները պատրաստվում են իրենց էվակուացիայից հետո ոչնչացնել իտալական ռազմածովային ուժերը:

Ամերիկացիներն արդյունավետ էին գործում նաև Ճապոնայի դեմ պատերազմում: Այդ ուղղությամբ տեղեկատվական գործողությունները ղեկավարող սպան նախկինում աշխատել էր Ճապոնիայում և գիտեր այդ երկրում կարևոր դիրքեր գրավող անձանցից շատերին: Նա նաև ծանոթ էր ճապոնացիներին բնորոշ կենսակերպին և բարքերին, մասնավորապես՝ նրանց աշխատանքային բարձր կարգապահությանը և ստացած հրամանները բծախնդրորեն կատարելու սովորությանը: Այդ պատճառով նա իր ագիտացիոն ռադիոհաղորդումներում «պահանջում» էր, որպեսզի ուղերձի բովանդակությունն անպայման զեկուցվի այս կամ այն կարևոր ճապոնացի պաշտոնյային (նշելով վերջինների ազգանունները), ինչն էլ պետական կամ զինվորական ծառայողները կատարում էին: Նման գործողությունները հոգեբանորեն ներազդում էին հաղորդագրություններում նշված պաշտոնյաների վրա և բարոյալքում նրանց, ինչն էլ հենց ամերիկյան ագիտացիայի նպատակն էր:

Բնորոշ է նաև, որ եթե տոտալիտար հասարակարգ ունեցող երկրներում՝ Գերմանիայում և ԽՍՀՄ-ում, ագիտացիոն և պրոպագանդիստական

[1] ԱՄՆ-ը պատերազմի մեջ մտավ 1941թ. դեկտեմբերի 7-ին, երբ ճապոնացիներն օդային հարձակում գործեցին Հավայան կղզիների Փըրլ Հարբոր նավահանգստում տեղակայված ամերիկյան ռազմածովային ուժերի վրա:

աշխատանքի հիմքում ընկած էին սեփական կարգերի գովերգումն ու հակառակորդի ուժի և հնարավորությունների նսեմացումը՝ հաճախ նրանց որպես խեղկատակներ ներկայացնելու միջոցով, ապա անգլո-ամերիկացիները վարում էին միանգամայն այլ քաղաքականություն: Նրանք լուրջ էին մոտենում հակառակորդին, իրենց քաղաքացիներին ներշնչում էին ավելի շուտ գերագնահատել թշնամուն, քան թերագնահատել նրան: Դա, անշուշտ, չէր խանգարում բրիտանացիներին երբեմն մամուլում սպանիչ սարկազմով ներկայացնել Գերմանիայի ֆյուրերին և նրա աջակիցներին:

Նշենք, որ ամերիկացիները և անգլիացիներն իրենց բնորոշ մտավոր կապիտալի և ավանդույթների հանդեպ հոգատար վերաբերմունքից ելնելով՝ ոչ միայն պահպանեցին համաշխարհային պատերազմներում ձեռք բերված ավանդույթները, այլև էապես զարգացրին տեղեկատվա-հոգեբանական ներգործության մեթոդները: Գիտելիքների կարևորումն անգլո-ամերիկացիների կողմից փոքր-ինչ յուրովի արտահայտվեց պատերազմից հետո, երբ նրանք որպես ռազմավար Գերմանիայից դուրս կրեցին գիտատեխնիկական բնույթի փաստաթղթերի մի քանի հարյուր էշելոն: Այս ամենի արդյունքում նրանք այսօր առաջատար դիրք են զբաղեցնում աշխարհում, և պատահական չէ, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալների համաձայն՝ Միացյալ Նահանգների բաժինը XXI դարի սկզբում համաշխարհային տեղեկատվական հաղորդակցման հոսքերում կազմում է մինչև 65%:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՆՏԵՐՆԵՏԻ ՄԻՋԻՆ ՕԳՏԱՏԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԽՈՑԵԼԻ ՄՆԱԼ ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԻՑ

Սամվել Մարտիրոսյան[*]

Հասարակության կիբեռանվտանգության ամենախոցելի հանգույցներից մեկը հենց հասարակությունն է: Հայաստանում հանրությունը համակարգչային տեխնիկայից, ինտերնետից օգտվելու տեսանկյունից մնում է խիստ խոցելի, ինչը բարձրացնում է ընդհանուր կիբեռանվտանգության հետ կապված խնդիրներից բխող վտանգների հնարավորությունը:

Հայաստանը դեռ չունի հստակեցված և հաստատված կիբեռանվտանգության հայեցակարգ: Սակայն արդեն կարելի է գնահատական տալ- հանրային իրազեկման կենտրոնների, կրթական ծրագրերում տեղեկատվական անվտանգության, տեղեկատվական հիգիենայի հետ կապված դրույթների բացակայությունը հասարակությունը դարձնում են խիստ խոցելի զանգվածային կիբեռհարձակումների տեսանկյունից: Մեծահասակներին համակարգչային տեխնիկայից օգտվելու գրագիտությանն ուղղված լայնածավալ ծրագրեր նույնպես չկան, ինչի պատճառով Հայաստանում ինտերնետի միջին օգտատերը բավական խոցելի վիճակում է գտնվում:

Կասպերսկի լաբորատորիայի տարեկան զեկույցների տվյալների ուսումնասիրությունը թույլ է տալիս գնահատել Հայաստանում իրական վիճակը կիբեռանվտանգության տեսանկյունից:

Այսպես, 2015թ. Կասպերսկի լաբորատորիայի *Kaspersky Security Bulletin* զեկույցից երևում է, որ ինտերնետում վարակվելու վտանգը սպառնում է Հայաստանից ցանց մտնող այցելուների 36,63%-ին, այսինքն՝ ամեն երրորդ հա-

[*] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

մակարգիչը հարձակման է ենթարկվում[1]: Եվ այս ցուցանիշով Հայաստանն աշխարհում ութերորդ տեղն է գրավում (տե՛ս *Նկար 1*):

Նկար 1

Յանցում վարակվելու տեսանկյունից ամենավտանգավոր երկրների քանակը, 2015թ. տվյալներ Kaspersky Security Bulletin 2015թ. տվյալներով

The TOP 20 countries where users face the greatest risk of online infection

	Country*	% of unique users**
1	Russia	48.90
2	Kazakhstan	46.27
3	Azerbaijan	43.23
4	Ukraine	40.40
5	Vietnam	39.55
6	Mongolia	38.27
7	Belarus	37.91
8	Armenia	36.63
9	Algeria	35.64
10	Qatar	35.55
11	Latvia	34.20
12	Nepal	33.94
13	Brazil	33.66
14	Kyrgyzstan	33.37
15	Moldova	33.28
16	China	33.12
17	Thailand	32.92
18	Lithuania	32.80
19	UAE	32.58
20	Portugal	32.31

Սակայն այս ցուցանիշով, 2014թ. համեմատ, Հայաստանը բարելավել է իր վիճակը- այդ տարի երկիրը գտնվում էր հինգերորդ տեղում, և հարձակման վտանգը սպառնում էր ինտերնետից օգտվողների մոտ կեսին՝ 48,66%-ին (տե՛ս *Նկար 2*)[2]:

[1] Kaspersky Security Bulletin 2015. Overall statistics for 2015, https://securelist.com/analysis/kaspersky-security-bulletin/73038/kaspersky-security-bulletin-2015-overall-statistics-for-2015/

[2] Kaspersky Security Bulletin 2014. Overall statistics for 2014, https://securelist.com/analysis/kaspersky-security-bulletin/68010/kaspersky-security-bulletin-2014-overall-statistics-for-2014/

Նկար 2

Յանցում վարակվելու տեսանկյունից ամենավտանգավոր երկրների քանակը, 2014թ. տվյալներ, Kaspersky Security Bulletin 2014թ. տվյալներով

The TOP 20 countries where users face the greatest risk of online infection

	Country*	% of unique users**
1	Russia	53.81%
2	Kazakhstan	53.04%
3	Azerbaijan	49.64%
4	Vietnam	49.13%
5	Armenia	48.66%
6	Ukraine	46.70%
7	Mongolia	45.18%
8	Belarus	43.81%
9	Moldova	42.41%
10	Kyrgyzstan	40.06%
11	Germany	39.56%
12	Algeria	39.05%
13	Qatar	38.77%
14	Tadjikistan	38.49%
15	Georgia	37.67%
16	Saudi Arabia	36.01%
17	Austria	35.58%
18	Lithuania	35.44%
19	Sri Lanka	35.42%
20	Turkey	35.40%

Համակարգիչների վարակվածության տեսանկյունից Հայաստանը նույնպես վտանգավոր վիճակում է գտնվում: Ամեն երեք համակարգչից երկուսը վարակված է, այդ ցուցանիշը 2015թ. հասնում էր 65,61%-ի, և Հայաստանը զբաղեցնում էր հինգերորդ հորիզոնականը (տե՛ս *Նկար 3*)[3]:

[3] Kaspersky Security Bulletin 2015. Overall statistics for 2015, https://securelist.com/analysis/kaspersky-security-bulletin/73038/kaspersky-security-bulletin-2015-overall-statistics-for-2015/

Նկար 3

Վարակված համակարգիչների տեսանկյունից ամենավտանգավոր երկրների քանակը, 2015թ. տվյալներ, Kaspersky Security Bulletin 2015թ. տվյալներով

The TOP 20 countries by the level of infection

	Country*	% of unique users**
1	Vietnam	70.83
2	Bangladesh	69.55
3	Russia	68.81
4	Mongolia	66.30
5	Armenia	65.61
6	Somali	65.22
7	Georgia	65.20
8	Nepal	65.10
9	Yemen	64.65
10	Kazakhstan	63.71
11	Iraq	63.37
12	Iran	63.14
13	Laos	62.75
14	Algeria	62.68
15	Cambodia	61.66
16	Rwanda	61.37
17	Pakistan	61.36
18	Syria	61.00
19	Palestine	60.95
20	Ukraine	60.78

Իրավիճակը մտահոգիչ է նաև սմարթֆոնների օգտագործման դեպքում. վնասակար ծրագրային ապահովման տեղադրման քանակով նույնպես Հայաստանն առաջատար երկրների ցանկում է (տե՛ս *Նկար 4*)[4]:

Փաստացի, Հայաստանի հասարակությունը շարունակում է վտանգված մնալ կիբեռհանցագործների զանգվածային հարձակումների իմաստով: Կիբեռանվտանգության պատասխանատու մարմին ստեղծելու, լայն հասարակության շերտերին կրթելու ծրագրերի բացակայությունն աստիճանաբար ավելի է խորացնելու պոտենցիալ վտանգները Հայաստանի համար:

[4] Kaspersky Security Bulletin 2014. Overall statistics for 2014, https://securelist.com/analysis/kaspersky-security-bulletin/68010/kaspersky-security-bulletin-2014-overall-statistics-for-2014/

Նկար 4

Սմարթֆոնների վրա տեղադրված
վնասակար հավելվածների տոկոսի տեսանկյունից
ամենավտանգավոր երկրների տասնյակը, 2014թ. տվյալներ,
Kaspersky Security Bulletin 2014թ. տվյալներով

TOP 10 countries by risk of infection

	Country*	% of malicious applications
1	Vietnam	2.34%
2	Poland	1.88%
3	Greece	1.70%
4	Kazakhstan	1.62%
5	Uzbekistan	1.29%
6	Serbia	1.23%
7	Armenia	1.21%
8	Czech Republic	1.02%
9	Morocco	0.97%
10	Malaysia	0.93%

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՆ ԱՅՍՕՐ[1]

Գագիկ Հարությունյանի հարցազրույցը «Սպուտնիկ Արմենիա» լրատվական պորտալին

Աշխարհը սրընթաց փոփոխությունների է ենթարկվում, և, ի տարբերություն անցած դարաշրջանի, այժմ մենք ապրում ենք տեղեկատվական պատերազմների, զանգվածային միգրացիայի և աշխարհաքաղաքական լարվածության նոր միջավայրում:

Այն մասին, թե ինչպես են ազդում տեղեկատվական պատերազմները հասարակության վրա, ինչպես է Հայաստանը պայքարում կիբեռհարձակումների դեմ, ինչպես նաև հանրային դիվանագիտության դերի մասին խոսել է ***«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրեն, քաղաքագետ Գագիկ Հարությունյանը:***

- ***Ինչպե՞ս կնկարագրեք տեղեկատվական պատերազմների ֆենոմենը:***

- Համարվում է, որ առաջին տեղեկատվական գործողությունն իրականացրել է Ոդիսևսը՝ Տրոյան գրավելու ժամանակ, իսկ տրոյական ձին քաղաք մտցնելն առաջին տեղեկատվական գործողության դասական օրինակ է:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ի հայտ եկան տեղեկատվական պատերազմների տարբեր հայեցակարգեր, որոնք, ի դեպ, ժամանակակից «հիբրիդային» պատերազմների կարևորագույն բաղադրիչներից են:

Մեր տարածաշրջանում կիրառվում են տեղեկատվական գործողությունների գրեթե բոլոր տեսակները՝ ապատեղեկատվություն, տեղեկատվության կորզում, ներգործում հասարակության գիտակցության վրա և այլն: Այս համատեքստում հարկ է հատուկ նշել երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմները, որտեղ դրվում է, օրինակ, պատմական հիշողության նպատակաուղղված վերացման և կեղծման խնդիրը: Այդ համատեքստում նկատենք, որ քաղաքաշինության նախարարության (այժմ՝ կոմիտե) չինովնիկնե-

[1] Հարցազրույցը վարել է *Հառուրա Սարգսյանը*, http://armeniasputnik.am/armenia/20161026/5272825/kiberpaterazm-gagik-harutyunyan.html.

ը նպատակաուղղված քանդում են Երևանի հին շենքերը, ինչպես ժամանակին բոլշևիկները քանդում էին եկեղեցիներն ու դրանց տեղը կինոթատրոններ կառուցում, այդպես էլ հիմա մեզ մոտ, օրինակ, քանդում են ակադեմիայի շենքն ու եկեղեցի կառուցում:

Մինչդեռ հայտնի է, որ խեղված պատմական հիշողություն ունեցող հասարակությունները ոչ միայն ոչ համարժեք են ընկալում ժամանակակից իրողությունները, ինչը զգալիորեն նվազեցնում է որոշումների կայացման մակարդակը քաղաքական վերնախավի հարթակում, այլև զրկվում են իրենց մոտակա ապագան կանխատեսելու հնարավորությունից, ինչը հատկապես կարևոր է մեր անհանգիստ դարաշրջանում:

Նոր ֆորմացիայի տեղեկատվական պատերազմների մեկ այլ օրինակ է, այսպես կոչված, «էֆեկտների» վրա հիմնված գործողությունը: Հենց այս սկզբունքով էլ, իմ կարծիքով, կազմակերպվել էր «Սասնա ծռեր» գործողությունը:

Կարելի է հիշել նաև տեղեկատվական գործողությունները՝ ԼԳԲՏ-ի, թեթև թմրանյութերի և նախկինում հասարակության համար փակ այլ թեմաները: Այս ամենում երբեմն մենք մեղադրում ենք միայն արևմտյան պետություններին, սակայն դրանց հետ զուգահեռ գործում են այնպիսի անդրազգային ընկերությունները, որոնց շրջանառությունն, ասենք, սեքս-արդյունաբերության մեջ, կազմում է տարեկան մի քանի տրիլիոն դոլար: Այնպես որ, այդ ոլորտի բազմաթիվ ՀԿ-ներ փաստացի սպասարկում են նման ընկերությունների և դրանց հետ կապված կոռումպացված չինովնիկների:

- Ի՞նչ է անում Հայաստանը սրան հակազդելու համար:

- Մենք պաշտպանվում ենք պարզ տեղեկատվական հարձակումներից, սակայն մենք պետք է հասկանանք, որ նոր սերնդի տեղեկատվական պատերազմների առաջին խնդիրը, եթե հրաժարվենք քաղաքական կոռեկտությունից և իրերն իրենց անուններով կոչենք, «հասարակությանը հիմարացնելն է», քանի որ սեփական մտավոր և հոգևոր պաշարները կորցրած հասարակությունը, որպես կանոն, չի կարող պաշտպանվել տեղեկատվական հարձակումներից:

Վերջին շրջանում մեզ մոտ զգալիորեն նվազել է գիտատեխնոլոգիական մակարդակը, մինչդեռ ակտիվորեն պաշտպանվել կարող են միայն բացառապես զարգացած, շրջակա միջավայրը համարժեք ընկալող մարդիկ: Շատ կարևոր է ունենալ լավ տեխնոլոգիական հիմք, որպեսզի պաշտպանես քեզ հաքերների ազդեցությունից և գաղտնալսումից:

Նշեմ, որ տեխնիկական կիբեռանվտանգության ոլորտում մենք լավ կադրեր ունենք, տաղանդավոր երիտասարդություն, որն օժտված է հարձակվողական և պաշտպանական հմտություններով: Սակայն այստեղ էլ որոշակի թերություններ կան, և պատահական չէ, որ մենք մեր հիմնադրամի առաջատար փորձագետներից մեկի՝ Սամվել Մարտիրոսյանի հետ փորձում ենք կիբեռանվտանգության հայեցակարգի նախնական սկզբունքներ կազմել:

- Այժմ Դուք ուսումնասիրում եք տեղեկատվական գործակալների մասին օրենքի համաշխարհային փորձը: Կիրառելի՞ է դա Հայաստանում:

- Այդ մասին առաջին օրենքն ընդունվել է ԱՄՆ-ում դեռևս 1938 թվականին: Եթե որոշ կազմակերպություններ և անհատներ նյութական ռեսուրսներ են ստանում և աշխատում այն երկրի համար, որը վճարում է այդ աշխատանքը, ապա իրերը պետք է հստակ իրենց անուններով կոչել: Մեծ ուշացումով այդ հարցը բարձրաձայնեցին Ռուսաստանի ներկա իշխանությունները: Դա համաշխարհային պրակտիկա է, որին, մեր առանձնահատկությունները հաշվի առնելով, սկզբունքորեն կարող է դիմել նաև Հայաստանը:

- Վերջերս դուք «Նորավանք» հիմնադրամը ներկայացնում էիք Հռոդոսում անցկացվող «Քաղաքակրթությունների երկխոսություն» ֆորումում: Ձեր կարծիքով, Հունաստանում հնչեցրած ո՞ր գաղափարները կարող են կիրառվել Հայաստանում:

- Հիմնական գաղափարն այն էր, որ ներկա աշխարհակարգը կանգնած է լուրջ փոփոխությունների շեմին: Այս ամենը փոքր-ինչ ԽՍՀՄ փլուզումն է հիշեցնում, որը մեծ ողբերգություն դարձավ շատերի համար:

Կարծում եմ, որ այսօր նաև Հայաստանում պետք է պատրաստ լինեն նմանատիպ սցենարների, այդ թվում նաև այսպես կոչված «վատ» սցենարների: Օրինակ, ֆորումին մասնակցող որոշ եվրոպական երկրների ղեկավարների խոսքով, միգրանտների մեծ հոսքի պատճառով մի քանի տարի հետո այլևս չի լինի այն քրիստոնյա Եվրոպան, որը մենք գիտենք և որի հետ հարաբերություններ են կառուցվում:

- Ինչպե՞ս եք գնահատում հայ-հունական փոխգործակցությունը:

- Հույների հետ մենք շատ նման ենք քաղաքակրթական հատկանիշներով: Բացի այդ, ինչպես մեզ մոտ, այնպես էլ Հունաստանում, Թուրքիայի հետ լուրջ խնդիրներ կան. թուրքական ինքնաթիռները պարբերաբար խախտում են հունական օդային տարածքը, իսկ Կիպրոսը բաժանված է երկու պետության:

Հունական հասարակության մեծ մասը նույնպես մտահոգված է միգրանտների հոսքով: Այնպես որ, նրանք էլ մեզ նման փորձում են դաշնակիցներ գտնել ժամանակակից մարտահրավերներին դիմակայելու համար, և այդ գործում հատուկ դեր է խաղում հանրային դիվանագիտությունը:

Սրա վառ ապացույցն է «Նորավանք» հիմնադրամի գործակցությունը Հունաստանի «Բյուզանդական հիմնադրամի» հետ, որի տնօրենն, ի դեպ, կիբեռանվտանգության գծով հայտնի մասնագետ, պրոֆեսոր Ջորջ Կոստոպուլոսն է:

- Էլ ի՞նչ նախագծեր է իրականացնում «Նորավանք» հիմնադրամը:

- Մենք աշխատանքներ ենք տանում տեղեկատվական անվտանգության, տարածաշրջանային քաղաքականության, ինչպես նաև ժամանակակից հայագիտության ոլորտում՝ հաշվի առնելով Հայաստանից դուրս ժամանակակից հայ համայնքների ուսումնասիրությունը:

Հիմնադրամի գիտակրթական կենտրոնում, բացի ավանդական «Նորավանքյան ընթերցումներից», այսօր ինտենսիվ աշխատանքներ են տարվում համահայկական առցանց համալսարանի հայեցակարգի ստեղծման ուղղությամբ, որտեղ որպես դասախոսներ հանդես կգան հայտնի հայ գիտնականներ ամբողջ աշխարհից, իսկ մեր հրատարակչական կենտրոնն այս տարիների ընթացում շուրջ 400 ամսագիր և 90 գիրք է հրատարակել:

Տարածաշրջան

ԼՂՀ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. հոկտեմբեր

Հրայր Փաշայան[*]

Ղարաբաղյան հակամարտություն. Ղարաբաղյան հակամարտությունը գտնվում էր ինչպես հակամարտող կողմերի, այնպես էլ տարբեր ուժային կենտրոնների ու միջազգային կառույցների ընդգծված ուշադրության կենտրոնում: Դեռևս սեպտեմբերի վերջերին ԱՄՆ պետքարտուղարը, խոսելով այսպես կոչված սառեցված հակամարտությունների մասին, հայտարարել էր, որ Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարները պատրաստ չեն Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը: Իհարկե, Ջոն Քերիի հայտարարության վերաբերյալ կարելի է տարբեր մեկնաբանություններ կատարել:

Սակայն հատկանշականը պաշտոնական Բաքվի խիստ քննադատական արձագանքն էր, որտեղ այն ընկալվեց որպես իրենց ուղղված մեսիջ: Ըստ երևույթին, հաշվի առնելով հայտարարության քողարկված ենթատեքստը և հասկանալով, որ հիմնախնդրի լուծված չլինելու հիմնական պատասխանատվությունն ընկած է պայմանավորվածություններից տարբեր ձևերով խուսափող Ադրբեջանի վրա, կառավարության նիստում Ի.Ալիևը հայտարարել է, որ «առնվազն անամոթություն է Ադրբեջանին հակամարտությունը կարգավորելու ցանկության բացակայության մեջ մեղադրելը»: Նրա կարծիքով՝ ասել «երկու կողմերն էլ մեղավոր են, կողմերը պատրաստ չեն դրան, այս հարցը իսրայելա-պաղեստինյան հակամարտությունից էլ բարդ է»՝ նշանակում է պարզապես սատարել Հայաստանի զավթողական քաղաքականությանը:

Ալիևյան վարչակազմն անուղղակիորեն հայտնվել է նաև միջազգային կառույցների քննադատության թիրախում: Մասնավորապես, ՄԱԿ-ի՝ Մար-

---

[*] Արցախի պետական համալսարանի փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս, քաղաքական գիտությունների թեկնածու:

դու իրավունքների խորհրդի 33-րդ նստաշրջանի շրջանակներում գերագույն հանձնակատար Զեիդ Ռաադ ալ Հուսեյնին հայտարարել էր, թե նրա գրասենյակը հնարավորություն չունի ծանոթանալու Լեռնային Ղարաբաղում կոնֆլիկտային իրավիճակին, այդ թվում՝ այս տարվա ապրիլյան իրադարձություններից հետո:

ԵԽԽՎ աշնանային նստաշրջանում Եվրոպայի խորհրդի կողմից Լեռնային Ղարաբաղ մուտք գործելու անհրաժեշտության մասին է հայտարարել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդը՝ ընդգծելով Լեռնային Ղարաբաղ մեկնելու հարցի քաղաքականացման անթույլատրելիությունը: Դիրքորոշում է արտահայտել նաև ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովում Հարավային Կովկասի հարցերով հատուկ ներկայացուցիչ Քրիստիան Վիգենինը: Պատասխանելով այն հարցին, թե հնարավոր է համարում այցը տարածաշրջան, նա ասել է, որ, իր կարծիքով, խաղաղ գործընթացին մասնակցող մարդկանց համար կարևոր է տեսնել իրավիճակը տեղում:

Ստեփանակերտի և Երևանի արձագանքը չուշացավ: Մասնավորապես, հավաստիացնելով, որ ԼՂՀ իշխանությունները բաց են Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի (ՄԻԳՀԳ) հետ անկեղծ համագործակցությանը՝ ուղղված ժողովրդավարական նորմերի և սկզբունքների ամրապնդմանը, ինչպես նաև կոնֆլիկտային իրավիճակում մարդու իրավունքների պաշտպանությանը, ԼՂՀ արտաքին գործերի նախարար Կարեն Միրզոյանը հրավիրել է ՄԱԿ մարդու իրավունքների գերագույն հանձնակատարին այցելել Լեռնային Ղարաբաղ կամ ուղարկել թիմ՝ անաչառ և օբյեկտիվ գնահատական տալու մարդու իրավունքների բնագավառում առկա իրավիճակին, ինչպես նաև այս տարվա ապրիլին Լեռնային Ղարաբաղի ժողովրդի դեմ իրագործված հանցագործություններին:

Արցախի Հանրապետությունը, հյուրընկալ ավանդույթի համաձայն, միշտ էլ պատրաստակամ է եղել ընդունելու ոչ միայն ՄԱԿ մարդու իրավունքների գերագույն հանձնակատարին, այլև երկրամաս այցելելու բոլոր ցանկացողներին: Սակայն Արցախի Հանրապետություն այցելելու մտադրությունները սովորաբար չեն իրականանում Ադրբեջանի ապակառուցողական, քաղաքականության արդյունքում, որի մասին է վկայում տխրահռչակ «սև ցուցակի» գոյությունը:

Ի.Ալիևը նաև խոստովանեց, որ բանակցությունների ժամանակ իր վրա ճնշում են գործադրում՝ պահանջելով ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Փաստորեն, ինչ-որ նկատառումներից ելնելով՝ նա ստիպված էր խոստովանել, որ, բացի իրենցից, ողջ միջազգային հանրությունը գիտակցում է, որ առանց Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչման հիմնախնդրի կարգավորումն անհնար է:

ԵԱՀԿ այցելությունը տարածաշրջան. Հոկտեմբերի 23-25-ը կայացավ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների և ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկի Բաքու, Ստեփանակերտ և Երևան այցելությունը, որի արդյունքների վերաբերյալ տարածվեց հայտարարություն: Համանախագահներն ընդգծել են, որ հրադադարի ռեժիմի պահպանումն ապահովում է ընթացող բանակցությունների անհրաժեշտ հիմքը, նշել Վիեննայում ու Սանկտ Պետերբուրգում ընդունած որոշումների լիակատար իրականացման կարևորությունը և քննարկել ներկայիս աշխատանքային առաջարկները՝ հասնելու առարկայական բանակցությունների հանուն տևական խաղաղության:

Նախագահներից յուրաքանչյուրն արտահայտել է իր տեսակետները, թե ինչպես առաջ տանել կարգավորման գործընթացը և վերահաստատել համաձայնությունը ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակի ընդլայնման ուղղությամբ: Համանախագահները ծրագրում են նաև հանդիպել արտաքին գործերի նախարարների հետ՝ 2016թ. դեկտեմբերին Համբուրգում ԵԱՀԿ նախարարական խորհրդի հանդիպման ժամանակ՝ քննարկելու հնարավոր ամենավաղ ժամկետներում նախագահների հնարավոր հանդիպումը: Արդյո՞ք կհաջողվի միջնորդներին իրագործել նշված դրույթները՝ դժվար է հստակ կանխատեսել: Սակայն Բաքվի՝ պայմանավորվածությունները խախտելու բազմամյա փորձը հաշվի առնելով՝ կարելի է կանխատեսել, որ դրանք նույնպես կարժանանան նախորդների ճակատագրին:

ԼՂՀ ճանաչման գործընթացը շարունակվում է. Անկախ Ալիևի ցանկությունից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությանն ճանաչման գործընթացը տարբեր մակարդակներում շարունակվում է: ԱՄՆ Կոլորադո նահանգի Դենվեր քաղաքի քաղաքապետ Մայքլ Հենքոքը 2016թ. սեպտեմբերի 21-ը պաշտոնապես ճանաչել է «Հայկական Անկախության օր»՝ հայ-

կական երկու պետությունների՝ Հայաստանի և Արցախի (Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն) համար. «2016թ. հայկական երկու պետությունները՝ Հայաստանի Հանրապետությունն ու Արցախը (Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը) տոնում են անկախության հռչակման 25-ամյակը:

Արցախի ժողովուրդը շարունակում է պայքարը՝ հանուն հայկական ինքնության պահպանման, սեփական սահմանները պատերազմական հանցագործություններից զերծ պահելու: Դենվերը շնորհավորում է հայկական համայնքին՝ սեփական ժառանգությանը հավատարիմ մնալու հանձնառության, հայրենիքին նվիրվածության, չնայած մարտահրավերներին՝ ժողովրդին ծառայելու մղումների համար»:

ՀԱՊԿ հայտարարությունը. Հոկտեմբերի 14-ին Երևանում տեղի ունեցած Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) գագաթաժողովում խորհրդի նիստի արդյունքներով անդամ պետությունների ղեկավարները հայտարարություն են ընդունել, որում ՀԱՊԿ-ն իր աջակցությունն է հայտնել մայիսի 16-ին Վիեննայում և հունիսի 20-ին Սանկտ Պետերբուրգում ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ տեղի ունեցած գագաթաժողովներին ձեռք բերված պայմանավորվածություններին՝ ուղղված հակամարտության գոտում իրավիճակի սրման կանխարգելմանը, իրադրության կայունացմանը և խաղաղ բանակցային գործընթացի առաջմղման համար պայմանների ստեղծմանը:

Սակայն հատկանշական է, որ ՀԱՊԿ գագաթաժողովին, լրագրողների հետ ճեպազրույցում ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը կարևորեց Թուրքիայի դերը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում, որը տարբեր մեկնաբանությունների արժանացավ հայկական և թուրքական մամուլում: Մասնավորապես, Թուրքիայի արտգործնախարարությունը ողջունեց Լավրովի հայտարարությունը, իսկ Հայաստանի փոխարտգործնախարար Շավարշ Քոչարյանը, հայտարարեց, որ Թուրքիան իր բացահայտ միակողմանի դիրքորոշմամբ տեղ չունի և պետք է հեռու պահվի Լեռնային Ղարաբաղի բանակցային գործընթացից:

ԵՄ-Արցախ. Հոկտեմբերի 21-ին աշխատանքային այցով Երևանում գտնվող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին գործե-

րի նախարար Կարեն Միրզոյանը հանդիպել է Հարավային Կովկասի և Վրաստանի ճգնաժամի հարցերով Եվրամիության հատուկ ներկայացուցիչ Հերբերտ Զալբերի հետ: Հանդիպմանը քննարկվել են Արցախ-ԵՄ հարաբերություններին վերաբերող մի շարք հարցեր:

Կարեն Միրզոյանն ընդգծել է ԼՂՀ իշխանությունների պատրաստակամությունը՝ զարգացնել ԵՄ-ի հետ համագործակցությունը բոլոր ուղղություններով, ներառյալ Արցախում ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդումը, և վերահաստատել հրավերը Հերբերտ Զալբերին՝ նրա մանդատի շրջանակներում այցելել ԼՂՀ:

Անդրադարձ է կատարվել նաև ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում ստեղծված իրավիճակին: Այդ համատեքստում կողմերը կարևորել են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերը՝ ուղղված բանակցությունների վերսկսման համար պայմանների ձևավորմանը, մասնավորապես, ընդգծել Վիեննայում և Սանկտ Պետերբուրգում ձեռք բերված պայմանավորվածությունների իրագործման անհրաժեշտությունը:

Հայաստան-Արցախ. Հոկտեմբերի 21-22-ը, հայկական երկու հանրապետությունների ռազմական փոխհամագործակցության, փորձի փոխանակման և գործողությունների համադրման ծրագրի շրջանակում, աշխատանքային այցով Պաշտպանության բանակ են այցելել ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը, ԶՈւ գլխավոր շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանը և ՀՀ նախագահի գլխավոր ռազմական տեսուչ, գեներալ-գնդապետ Միքայել Հարությունյանը:

ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հետ հանդիպման ժամանակ, որին մասնակցում էր նաև ԼՂՀ պաշտպանության նախարար, ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Լևոն Մնացականյանը, քննարկվել է հայկական երկու հանրապետությունների ռազմական համագործակցությանը վերաբերող հարցերի լայն շրջանակ, նախանշվել են պաշտպանական ոլորտում իրականացվելիք հետագա աշխատանքների կարևորագույն ուղղությունները:

Պաշտպանական գերատեսչությունների ղեկավարները եղել են նաև առաջնագծում, ծանոթացել կատարված ինժեներական աշխատանքներին,

ղեկավարման համակարգի, նորագույն տեխնիկական միջոցների ներդրման և զսպման մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ իրականացված ծավալուն գործընթացներին, շփվել դիրքապահ զինծառայողների հետ, որոնցից առավել աչքի ընկածները խրախուսվել են պաշտպանության նախարարի կողմից: Հյուրերն այցելել են նաև ՊԲ «Ասպարեզ» ուսումնական կենտրոն:

Հոկտեմբերի 22-ին աշխատանքային այցով Երևանում գտնվող ԼՂՀ ԱԳ նախարար Կարեն Միրզոյանը հանդիպել է ՀՀ գործընկերոջ հետ: Արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարները Վիեննայում և Սանկտ Պետերբուրգում կայացած գագաթաժողովներին ձեռք բերված պայմանավորվածությունների համատեքստում քննարկել են Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացին առնչվող հարցեր:

Արցախ-Սփյուռք. Տիգրանակերտի պատմամշակութային արգելոցում հոկտեմբերի 15-ին ծառատունկ է կազմակերպվել աշխարհի բոլոր մայրցամաքներից Արցախ ժամանած շուրջ 70 երիտասարդի մասնակցությամբ: Նախաձեռնությունը յուրահատուկ նշանակություն ունի, հատկապես ծառատունկի վայրի ընտրության և մասնակիցների առումով: Տիգրանակերտում կազմակերպված ծառատունկը սփյուռքահայ երիտասարդների համար յուրահատուկ հնարավորություն էր՝ ծանոթանալու Արցախի Տիգրանակերտի պատմությանը, հնագիտական նշանակությանը, ինչպես նաև նպաստելու արգելոցի հետագա զարգացմանը:

1991-Ի ԼՂՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵՆ ԵՎ ՀԵՏԱԶԳՎԱԾ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԳԱՂԱՓԱՐԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հրայր Փաշայան[*], *Լիանա Բալայան*[**]

Դեկտեմբերի 10-ին լրանում է Արցախի Հանրապետության՝ սեփական կարգավիճակի հստակեցման նպատակով կազմակերպված հանրաքվեի 25-րդ տարեդարձը: Դրանով, դեռևս գործող ԽՍՀՄ օրենքների և միջազգային իրավունքի տառին ու ոգուն համապատասխան, արցախահայությունն արտահայտեց իր կամքը՝ հավատարմություն հայտնելով այն սկզբունքներին, որոնք բովանդակում է 1991թ. սեպտեմբերի 2-ի հռչակագիրը[1]: Դա բխում էր տվյալ ժամանակաշրջանի ռազմական ու քաղաքական իրողություններից, մասնավորապես՝ Արցախի բնակչությանն ադրբեջանական ագրեսիայից պաշտպանելու և բոլոր պետությունների հետ իրավահավասար հարաբերություններ հաստատելու անհրաժեշտությունից[2]: Այս առթիվ հատկանշական է ԼՂՀ անկախության հանրաքվեի արդյունքների վերաբերյալ անկախ դիտորդների ընդունած ակտը[3], որի վերլուծությունը մի շարք փաստարկների և եզրահանգումների հիմք է տալիս: Այսպես.

1. Տարբեր երկրներից ժամանած անկախ դիտորդների՝ ԼՂՀ անկախության հանրաքվեի արդյունքների մասին ընդունած ակտի բովանդակությունն առաջին հերթին կարևորվում է նման քաղաքական իրադարձության անաչառության տեսանկյունից: Դիտորդներն այցելել են ավելի քան 30

---

[*] Արցախի պետական համալսարանի փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս, քաղաքական գիտությունների թեկնածու:

[**] Ստեփանակերտի թիվ 2 հիմնական դպրոցի ուսուցչուհի:

[1] Այս մասին մանրամասն տե՛ս *Փաշայան Հ., Բալայան Լ.,* Արցախի անկախացումը՝ ազգերի ինքնորոշման դասական օրինակ, Գլոբուս, թիվ 7(76), էջ 21-26:

[2] Ըստ միջազգայնագետ Զ. Տոդուայի՝ «Բոլոր պետությունները ծնվել են արյամբ: Բայց հետո, որպեսզի չանհետանան, նրանք պետք է ստեղծարար կյանք սկսեն, ստեղծեն տնտեսություն, կառուցեն տներ, ձեռնարկություններ, կազմակերպեն առևտուր, ստեղծեն պայմաններ բնակչության բարեկեցության բարելավման համար: Այլապես, նոր պետության գոյության ժամկետը մեծ չէ...» (*Тодуа З.,* Экспансия исламистов на Кавказе и в Центральной Азии, М., 2006. с. 52).

[3] Статус Нагорного Карабаха в политико-правовых документах и материалах, Ереван, 1995г., с. 85-87.

ընտրական տեղամաս[4], ներկա գտնվել ձայների հաշվառմանը և ընդունած ակտում հավաստագրել, որ *«Հանրաքվեի նախապատրաստումը, անցկացումը և արդյունքների ամփոփումն իրականացվել են «ԼՂՀ հանրաքվեի անցկացման մասին ժամանակավոր կանոնակարգին» համապատասխան: Ընտրատարածքների ցուցակը և տարածքային ընտրական հանձնաժողովների հասցեները հրապարակվել են «Խորհրդային Ղարաբաղ» թերթում...»:* Այսինքն՝ դիտորդները փաստել են, որ ընտրությունները կազմակերպվել են դրա համար պահանջվող իրավական նորմերին համահունչ, չնայած *«հանրաքվեն անցկացվում էր ԼՂՀ-ի դեմ զինված ագրեսիայի պայմաններում, որն արտահայտվում էր Ստեփանակերտ քաղաքի և այլ բնակավայրերի տարբեր զինատեսակների կիրառմամբ չընդհատվող հրետակոծությամբ»:*

2. Հանրաքվեի կազմակերպման և անցկացման ընթացքում պահպանվել են ԼՂՀ տարածքում բնակվող բոլոր ազգությունների քվեարկությանը մասնակցելու իրավունքներն ու պայմանները: Այդ նպատակով քվեաթերթիկները կազմվել են երեք՝ հայերեն, «ադրբեջաներեն» և ռուսերեն լեզուներով: Ընդ որում՝ կայազորի միջոցով քվեաթերթիկներն ուղարկվել էին նաև ԼՂՀ ադրբեջանաբնակ վայրերը: Տարաբնույթ ընկալումներից ու մեկնաբանություններից խուսափելու, ինչպես նաև ընտրողներին հստակորեն կողմնորոշելու նպատակով քվեաթերթիկը պարունակել է *«Համաձա՞յն եք Դուք, որպեսզի հռչակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լինի անկախ պետություն ...»* հարցը և *«ԱՅՈ» ու «ՈՉ» բառերը՝ անցանկալին ջնջել նշումով»:* Այսինքն՝ հանրաքվեի կազմակերպման և անցկացման հիմքում գերակայել է ժողովրդի կամքի արտահայտությունը, որը հանդիսանում է ինքնուրույն պետություն ստեղծելու ժամանակակից աշխարհի կարևորագույն չափանիշը:
3. Անկախ դիտորդներն իրենց ընդունած ակտում անհրաժեշտ են համարել նշելու, որ «Դիտորդների կողմից չեն հայտնաբերվել քվեարկության արարողակարգի, քվեաթերթիկների տրման, դրանց ձևակերպման, ձայների հաշվման խախտումներ»: Այս բոլորը հիմք են հանդիսացել նրանց

[4] Ընդհանուր առմամբ ստեղծվել էր 81 ընտրատարածք, որոնցից 11-ում հանրաքվեն չի կայացել (դրանցից 10-ը ադրբեջանական բնակչությամբ էր, իսկ մեկը կապված էր հրետակոծության առաջացրած պայմանների հետ): Տե՛ս Ակտ՝ 1991թ. դեկտեմբերի 10-ին ԼՂՀ-ում կայացած հանրաքվեի մասին, ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, g. 2, գ. 332, թ. 10-11:

եզրահանգման համար, ըստ որի. «Ելնելով քվեարկության արդյունքներից և նկատի ունենալով մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և միջազգային ակտերի դրույթները՝ անկախ դիտորդները հայտարարում են. ԼՂՀ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՁԱՅՆԵՐԻ ՃՆՇՈՂ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԱՅՏՎԵԼ Է ԼՂՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕԳՏԻՆ»: Այսինքն՝ անկախ դիտորդները փաստել են, որ հանրաքվեն համապատասխանել է և՛ տվյալ ժամանակ երկրում գործող ներպետական իրավական ակտերին, և՛ մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, և՛ միջազգային իրավունքի դրույթներին:

4. Չափազանց կարևոր է, որ հանրաքվեն անցկացվել է մինչև ԼՂՀ-ից ադրբեջանցի թուրքերի հեռանալը, որոնց մի մասը քվեարկությանը չի մասնակցել Բաքվի հրահանգով: Այդուհանդերձ, ադրբեջանական կողմն անկախության հանրաքվեին ներկայացնում է ինչ-ինչ վերապահումներ, որոնցից առավել «ծանրակշիռն» այն է, որ հանրաքվեին չի մասնակցել ադրբեջանական բնակչությունը: Մինչդեռ, ԼՂՀ անկախության հանրաքվեին մասնակցել է 108736 մարդ կամ բնակչության ընտրական իրավունք ունեցողների 82,2%-ը: Քանի որ այդ ժամանակ «ադրբեջանցիները» կազմում էին ԼՂՀ ընտրական իրավունք ունեցող բնակչության մոտ 25%-ը, ապա ակնհայտ է, որ «ադրբեջանցիների» մի մասը նույնպես մասնակցել է հանրաքվեին: Բայց նույնիսկ եթե մի պահ պատկերացնենք, որ բոլոր «ադրբեջանցիները» մասնակցել և դեմ են քվեարկել անկախությանը, ապա այդ դեպքում ևս ակնհայտ է, որ այն հանրաքվեի վերջնական արդյունքների վրա չի կարող ազդեցություն ունենալ: Հետևաբար, ինչպես հաստատել են մի քանի տասնյակ միջազգային դիտորդներ և օտարերկրյա լրատվամիջոցների ներկայացուցիչներ, հանրաքվեն անցել է անթերի:

Ինչպես արդեն նշվեց, ուղիղ 25 տարի է անցել այն օրից, ինչ արցախահայությունն իր ճակատագիրը տնօրինելու ընտրություն է կատարել, որը հետագայում հաստատվել է 2006թ. համաժողովրդական քվեարկութամբ ընդունված սահմանադրության և բազմիցս տեղի ունեցած իշխանության մարմինների ընտրությունների ընթացքում: Սակայն պարզվում է, որ հակամարտության կարգավորման նպատակով ԵԱՀԿ Մինսկի խմբի ներկայացրած տարբերակներում (ոչ պաշտոնական) իր ուրույն տեղն է գտել «հետաձգված

հանրաքվեի» գաղափարը[5]: Լեռնային Ղարաբաղի կարգավիճակին և կամարտահայտությանն առնչվող «կազանյան» փաստաթղթում առկա ձևակերպումները հակասում են ոչ միայն հակամարտության իրավական հիմքերին, այլև իրականությանն առհասարակ: Մանրամասնենք ըստ փաստաթղթում ներկայացված համապատասխան դրույթների:

Լեռնային Ղարաբաղի միջանկյալ կարգավիճակ. *«Մինչև Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակի որոշումը, Լեռնային Ղարաբաղը ստանում է միջանկյալ կարգավիճակ, որը նրա բնակիչներին տալիս է որոշակի իրավունքներ և արտոնություններ: Դրանք շարադրվելու են Խաղաղության համաձայնագրում, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի բնակիչներն ունենում են ժողովրդավարական հասարակության մեջ սոցիալական ու տնտեսական կենսագործունեությունն ու անվտանգությունը պաշտպանելու և վերահսկելու իրավունք: Լեռնային Ղարաբաղի բնակիչների իրավունքներն ու հիմնարար ազատությունները հարգվում են»:* Վերլուծելով մադրիդյան փաստաթղթի համապատասխան դրույթը՝ «Քաղաքական հետազոտությունների ակադեմիա» ՀԿ նախագահ Ա.Մանասյանն իրավամբ նկատում է. «Բայց ո՞վ ասաց, որ սոցիալական ու տնտեսական կենսագործունեության իրավունքը խլված է ԼՂՀ ժողովրդից, որ շնորհվի կամ վերադարձվի նրան, ո՞վ ասաց, որ ԼՂ ժողովուրդն այսօր հրաժարվել է միջազգային իրավունքից, կամ հակառակը՝ միջազգային իրավունքը մինչև խնդրի կարգավորումը երես է թեքել ԼՂ ժողովրդից: Դրանք մարդու ու մարդկանց հանրությունների անկապտելի իրավունքներ են, և ոչ մեկին դրանք նրանցից օտարելու կամ շնորհելու արտոնություն չի տրված»[6]:

Այնուհետև փաստաթղթում գրված է. «Լեռնային Ղարաբաղի բնակչությունը՝ միջանկյալ շրջանում Լեռնային Ղարաբաղը կառավարելու նպատակով, իրավունք է ստանում ընտրել իշխանության մարմիններ, որոնք իրականացնում են օրենսդիր և գործադիր իշխանություն Լեռնային Ղարաբաղի ներքին հարցերում: Արդարադատությունն իրականացնելու նպատակով Լեռնա-

[5] Այդպիսի ձևակերպումներ են առկա Մադրիդյան և Կազանյան կոչված փաստաթղթերում, որոնք ոչ պաշտոնապես հրապարակվել են Հայկական ուսումնասիրությունների ԱՆԻ կենտրոնի կողմից: Տե՛ս http://www.aniarc.am/2016/04/13/madrid-principals-armenian-text/, http://www.aniarc.am/2016/06/23/kazan-document-23-june/

[6] Տե՛ս *Մանասյան Ա.,* Ի՞նչ է ասված այսպես կոչված մադրիդյան փաստաթղթում կամ ի պաշտպանություն իշխանությունների ու «Սասնա ծռերի», http://www.ditaket.info

յին Ղարաբաղն իրավունք ունի հիմնել դատարաններ: Լեռնային Ղարաբաղի պաշտոնյաներն արտաքին շփումներ իրականացնելու լիազորություններ կունենան այն ոլորտներում, որոնք սահմանվում են Խաղաղության համաձայնագրով»:

Այս առթիվ Ա.Մանասյանը նորից նկատում է. «Այստեղ ևս նախատեսվում է ԼՂ ժողովրդին տալ այն, ինչ ինքն արդեն ունի և ինչ իրեն հասնում է ըստ միջազգային իրավունքի…»[7]: Իսկ հաջորդ կետում հետևյալն է նշված. «Լեռնային Ղարաբաղի միջանկյալ իշխանությունները կարող են ունենալ դիտորդի կարգավիճակ ԵԱՀԿ այն նստաշրջաններում, որոնցում քննարկվում են անմիջականորեն Լեռնային Ղարաբաղին վերաբերող հարցեր: Նրանք կարող են անդամակցել միջազգային այն կազմակերպություններին, որոնցում միջազգայնորեն ճանաչված լինելու կարգավիճակը նախապայման չէ:

Լեռնային Ղարաբաղն իրավունք է ունենում ստանալ արտասահմանյան երկրների և միջազգային կազմակերպությունների ֆինանսական օժանդակություն՝ պայմանով, որ այդ օժանդակությունը նախատեսված լինի մարդու իրավունքների, խաղաղ տնտեսական և ժողովրդավարական զարգացման, մշակութային և առևտրային կապերի համար կամ հիմնական մարդասիրական պահանջների բավարարմանը:

Նորից մեզ նվիրվում է այն, ինչն ամրագրված է 1992թ. ԵԱՀԽ-ի կողմից ընդունված փաստաթղթում և միջազգային իրավունքի հանրահայտ սկզբունքներում: Եվ դա կատարվում է ոչ թե հենց այնպես, այլ հայկական կողմից իրականացվող լուրջ զիջումների դիմաց, որի վերաբերյալ ձևակերպումն արդեն իսկ արձանագրված է **Ազատ կամարտահայտություն** ենթավերնագրի ներքո, որտեղ Լեռնային Ղարաբաղ աշխարհագրական հասկացությունը նույնացվում է ԼՂԻՄ-ի հետ՝ դրանից բխող վտանգավոր հետևանքներով:

«Լեռնային Ղարաբաղի իրավական վերջնական կարգավիճակը որոշվում է Լեռնային Ղարաբաղի բնակչության ազատ կամարտահայտության միջոցով: Քվեարկության ժամկետներն ու մանրամասները կողմերը համաձայնեցնում են ապագա բանակցություններում: Լեռնային Ղարաբաղի բնակչություն ասելով հասկացվում են 1988թ. ազգային համամասնությունով ԼՂԻՄ-ում ապրող բոլոր ազգերն այնպիսի էթնիկ համամասնությամբ, ինչպես եղել է

[7] Նույն տեղում:

մինչև հակամարտության սկիզբը: Քվեարկության ժամանակ ապագա կարգավիճակի հարցի կամ հարցերի ձևակերպման սահմանափակում չի լինելու և կարող է թույլ տալ յուրաքանչյուր կարգավիճակի հնարավորություն»[8]:

Եվ այսպես, ինչ վտանգներ է պարունակում «հետաձգված հանրաքվեն»: Առաջին հայացքից նոր հանրաքվեի կազմակերպումը որևէ իրական վտանգ չի ներկայացնում՝ հաշվի առնելով, որ ազատ ու անկախ ապրելու արցախահայության կամքն անշրջելի է, ենթակա չէ կասկածի, և նրա արդյունքներն այդ առումով ակնհայտ են: Սակայն տեսականորեն նոր հանրաքվեի անցկացումն ընդհանրապես կասկածի տակ է դնում Արցախի Հանրապետության 25-ամյա գոյության ու արցախահայության՝ իր ճակատագիրն անկախ տնօրինելու նպատակով բազմիցս ցուցաբերած կամարտահայտության, այդ թվում նաև տեղական և կենտրոնական մարմինների ընտրությունների օրինականությունը: Բացի այդ, գործնականում իրական վտանգը ոչ միայն նոր հանրաքվեի կազմակերպման, այլև «հետաձգված հանրաքվեի» մեջ է: Դա էր գլխավոր պատճառներից մեկը, որ եթե «մադրիդյան» անվանումը ստացած փաստաթղթի սկզբնական տարբերակում հետաձգված հանրաքվեի վերաբերյալ դրույթները տեղադրված էին առաջին կետում, ապա դրա նորացված կամ «կազանյան» փաստաթղթում Բաքվի պահանջով դրանք տարվել են հետ, և կատարվել են որոշակի այլ փոփոխություններ:

Բանն այն է, որ ադրբեջանական կողմը քաջ գիտակցում է, թե ինչպիսին են լինելու և՛ ներկայիս, և՛ 1988թ. դրությամբ գոյություն ունեցող ազգաբնակչության ընդգրկմամբ կազմակերպվելիք հանրաքվեի արդյունքները: Այդպիսի հանրաքվե 1991-ին տեղի է ունեցել, և նրա արդյունքները հայտնի են, որի մասին վերն արդեն նշվել է և շեշտվել, որ նույնիսկ բոլոր ադրբեջանական թուրքերի ԼՂՀ անկախությանը դեմ քվեարկելու դեպքում նրա արդյունքները չէին փոխվի: Ակնհայտ է նաև, որ ադրբեջանական կողմը զրկված է այդ հարցում արցախահայության քվեն ստանալու հնարավորությունից, հենց Բաքվի՝ հայ բնակչության նկատմամբ շարունակաբար իրականացվող հայատյաց քաղաքականության պատճառով: Հետևաբար, անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել, որոնք նման հանրաքվեի կազմակերպումը կհետաձգեն անորոշ ժամանակով, նպաստավոր պայմաններ ստեղծելով Բաքվի հետագա հավակնությունների

[8] Տե՛ս http://www.aniarc.am/2016/06/23/kazan-document-23-june/

համար: Այդպիսիք կարող են լինել ինչպես ուժի ցուցադրման, այնպես էլ տարբեր մեթոդներով բնակչության էթնիկական կազմը հօգուտ Ադրբեջանի փոխելուն ուղղված քայլերը:

Եթե մինչև ապրիլյան իրադարձությունները հայկական պաշտոնական շրջանակներում այս հարցի վերաբերյալ առկա էր համաձայնողական դիրքորոշում, ապա քառօրյա պատերազմը վեր հանեց դրա վտանգավորությունը՝ փոխելով հետաձգված հանրաքվեի վերաբերյալ պաշտոնական շրջանակների դիրքորոշումը: Մասնավորապես, ՀՀ ԱԳ փոխնախարար Շ.Քոչարյանը, խոսելով այդ մասին, նշեց, որ հետաձգված հանրաքվեի վերաբերյալ միջնորդների առաջարկի իմաստն այն է, որ ԱՀ իշխանությունը կարողանա փրկել իր դեմքը և ներկայացնել իր հասարակությանը հանրաքվե անցկացնելու անհրաժեշտությունը: Սակայն, նրա խոսքով, ժամանակը ցույց տվեց, որ Բաքուն այդ ժամանակն օգտագործում է ոչ թե իր դեմքը փրկելու և հասարակությանը հանրաքվեի անխուսափելիությունը ներկայացնելու համար, այլ գործում է լրիվ հակառակ ուղղությամբ:

«Այս հարցում նման դիրքորոշումը ստիպում է բանակցություններ վարել այլ մոտեցումների շուրջ: Ընդ որում, չի կարող գոյություն ունենալ այնպիսի դիրքորոշում, որն Ադրբեջանը կարողանա ընկալել որպես իր սանձազերծած ագրեսիայի խրախուսում: Մենք հետևողական կլինենք այդ հարցում»,- ասել է Շ.Քոչարյանը[9]:

[9] http://newsarmenia.am/am/news/nagorno_karabakh/artsakhum_hetadzgvats_hanraqvei_antskatsman/

ՎՐԱՍՏԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. հոկտեմբեր

Ջոնի Մելիքյան*

Քանի որ անցած հոկտեմբերը շատ կարևոր էր Վրաստանի ներքաղաքական կյանքում՝ երկրում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների հետ կապված, ապա պաշտոնական Թբիլիսիի արտաքին քաղաքական ակտիվությունը հասցվել էր նվազագույնի: Այնուամենայնիվ, անցած հոկտեմբերին տեղի ունեցան օտարերկրյա բարձրաստիճան անձանց մի քանի կարևոր այցելություններ Վրաստան (Ղրղզստանի նախագահ Ա.Աթամբաևի այցը հոկտեմբերի 12-13-ին, Ադրբեջանի էկոնոմիկայի նախարար Շ.Մուսթաֆաևի այցը հոկտեմբերի 28-ին):

Եվս մեկ կարևոր իրադարձություն էր ՉԺՀ առևտրի նախարար Գաո Հուչենի այցելությունը Թբիլիսի (հոկտեմբերի 5), որի ընթացքում կողմերը պայմանավորվեցին ավարտել ազատ առևտրի մասին համաձայնագրի շուրջ բանակցությունները: Անդրադառնանք հոկտեմբերին Վրաստանի արտաքին քաղաքական կյանքի ամենակարևոր իրադարձություններին:

Վրաստան-ԵՄ. Չնայած Վրաստանի քաղաքացիների համար անվիզա ռեժիմ մտցնելու ընթացակարգի դանդաղմանը՝ անվիզա ռեժիմի արագ մեխանիզմների մշակման շուրջ շարունակվող բանավեճերի պատճառով, այնուամենայնիվ, հոկտեմբերի 5-ին Եվրամիության անդամ երկրների մշտական ներկայացուցիչների կոմիտեն ԵՄ Խորհրդի անունից պաշտպանություն հայտնեց Վրաստանի քաղաքացիների համար կարճաժամկետ անվիզա ռեժիմ մտցնելուն:

Ավելի վաղ՝ սեպտեմբերին, Եվրախորհրդարանի քաղաքացիական ազատությունների, արդարադատության և ներքին գործերի կոմիտեն (*LIBE*) նույնպես իր աջակցությունն էր հայտնել Վրաստանի համար անվիզա ռեժի-

---

* «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

մի սահմանման մասին միջգերատեսչական բանակցություններ սկսելուն, ինչն օրենսդրական գործընթացի մաս է հանդիսանում:

Այսպիսով, հոկտեմբերի 5-ի որոշման արդյունքում ԵՄ նախագահող երկիր Սլովակիան կսկսի բանակցությունները Եվրախորհրդարանի և Եվրահանձնաժողովի հետ՝ համաձայնեցնելու համար լրացման վերջնական տեքստը: Այնուհետև Եվրախորհրդարանն է հերթի մեջ, որը սկսել է ԵՄ այլ ինստիտուտների, այդ թվում և ԵՄ Խորհրդի հետ կոնկրետ հարցի քննարկումները, որի համաձայնությունը նույնպես անհրաժեշտ է, որպեսզի Շենգենյան գոտում Վրաստանի համար անվիզա ռեժիմը մտնի ուժի մեջ:

ԵՄ Խորհրդի հիմնական դիրքորոշումն այն է, որ Վրաստանի համար անվիզա ռեժիմը պետք է գործարկվի անվիզա ռեժիմի դադարեցման նոր, պարզեցված և ավելի արագ մեխանիզմի ներմուծմանը զուգահեռ:

Վրաստան-Ղրղզստան. Հոկտեմբերի 12-13-ին երկօրյա պաշտոնական այցով Վրաստանում էր Ղրղզստանի նախագահ Ալմազբեկ Աթամբաևը: Ղրղզական պատվիրակության այցի ընթացքում Վրաստանի նախագահի նստավայրում տեղի ունեցավ երկու երկրների նախագահների հանդիպում՝ դեմ առ դեմ ձևաչափով. Աթամբաևը և Մարգվելաշվիլին քննարկել են երկու երկրների միջև համագործակցության խորացման հարցեր: Պետությունների ղեկավարները բանակցել են նաև ընդլայնված ձևաչափով՝ կառավարությունների անդամների, ինչպես նաև Վրաստանի նախագահի աշխատակազմի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Վրաստանի նախագահը հույս է հայտնել, որ իր ղրղզ պաշտոնակցի առաջին այցը Վրաստան կնպաստի երկու երկրների միջև հարաբերությունների զարգացմանը, որոնք պետք է «մշտապես ինտենսիվ երկխոսություն վարեն բարձր մակարդակով»: Հանդիպման շրջանակներում Վրաստանի և Ղրղզստանի նախագահները ստորագրել են մի շարք համաձայնագրեր անվտանգության, տնտեսության և կրթության ոլորտներում համագործակցության մասին: Կնքվել է համաձայնագիր «Եկամուտների կրկնակի հարկումից խուսափելու և հարկերի վճարումից խուսափելը կանխելու մասին»:

Համաձայնագրի գլխավոր նպատակը, ըստ Վրաստանի ֆինանսների նախարարության, երկրների միջև տնտեսական համագործակցության խո-

րացումն է և աջակցությունը ներդրումների ներգրավմանը: Փաստաթուղթը նախատեսում է համագործակցություն հարկային հարցերում և տեղեկատվության փոխանակման վերաբերյալ նոր չափորոշիչների ներդրման գործում: Վրաստանի նախագահը նշել է, որ 2017թ. ծրագրվում է վրացական պաշտոնական պատվիրակության պատասխան այց Ղրղզստան:

Վրաստանի վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլու հետ Ա.Աթամբաևի հանդիպման ժամանակ, ըստ Վրաստանի կառավարության մամուլի ծառայության տեղեկատվության, նշվել է, որ երկու երկրների միջև առկա է առևտրատնտեսական համագործակցության խորացման ներուժ:

Նրանց հանդիպումից առաջ երկկողմ համագործակցության հրատապ հարցերը և տարանցման պոտենցիալի օգտագործման կարևորությունը դարձել էին Վրաստանի և Ղրղզստանի արտգործնախարարներ Միխայիլ Ջանելիձեի և Էրլան Աբդիլդաևի հանդիպման գլխավոր թեմաները: Վրաստանի և Ղրղզստանի իրավապահ մարմինները նույնպես երեք հուշագիր ստորագրեցին փոխըմբռնման մասին, որը նախատեսում է համատեղ պայքար կազմակերպված հանցավորության, թրաֆիկինգի, թմրանյութերի ապօրինի շրջանառության և միգրացիայի դեմ:

Հուշագրերը Թբիլիսիում ստորագրեցին Վրաստանի ՆԳՆ ղեկավար Գեորգի Մգեբրիշվիլին, Ղրղզստանի ներքին գործերի նախարար Քաշկար Ջունուշալիևը և արտակարգ իրավիճակների նախարար Քուբաթբեկ Բորոնովը: Կողմերը պայմանավորվեցին խորացնել համագործակցությունը և փորձի փոխանակումը:

Նշենք նաև, որ Ղրղզստանի նախագահի Վրաստան կատարած այցելության արդյունքների հիման վրա հայտարարվել է 2017թ. առաջին կեսին վրացղրղզական առաջին բիզնես-համաժողովի անցկացման մասին:

Վրաստան-Չինաստան. Հոկտեմբերի 5-ին, ինչպես և ծրագրված էր, տեղի ունեցավ ՉԺՀ առևտրի նախարար Գաո Հուչենի այցը Վրաստան: Նա հանդիպում ունեցավ Վրաստանի վարչապետ Գ.Կվիրիկաշվիլու հետ, Թբիլիսիում Վրաստանի էկոնոմիկայի նախարար Դմիտրի Կումսիշվիլու հետ ստորագրեց հուշագիր Վրաստանի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջև ազատ առևտրի համաձայնագրի շուրջ բանակցությունների ավարտի մասին:

Ավելի վաղ՝ սեպտեմբերի 12-ին, Չինաստանում տեղի էր ունեցել Վրաստանի էկոնոմիկայի նախարարության և Չինաստանի առևտրի նախարարության ներկայացուցիչների վերջին աշխատանքային հանդիպումը, որի արդյունքներով Թբիլիսին հաջողությամբ ավարտեց Պեկինի հետ բանակցությունները և դառնալու է տարածաշրջանում առաջին երկիրը, որը հաստատելու է ազատ առևտրի ռեժիմ ՉԺՀ-ի հետ:

Այսպիսով ավարտվեց բանակցությունների և փաստաթղթի համաձայնեցման երկամյա փուլը, որի մեկնարկը տրվել էր 2015թ. դեկտեմբերի 10-ին Չինաստանում, որտեղ ստորագրվել էր Չինաստանի առևտրի նախարարության և Վրաստանի էկոնոմիկայի նախարարության միջև փոխադարձ համագործակցության հուշագիր, որն էլ նախատեսում էր բանակցությունների սկիզբը:

Ավելի վաղ՝ 2015թ. սեպտեմբերի 10-ին, չինական Դալյան քաղաքում տեղի ունեցած համաշխարհային տնտեսական համաժողովում ձեռք էր բերվել բանավոր պայմանավորվածություն վերոնշյալի մասին: Ինչ վերաբերում է բուն փաստաթղթին, նշենք, որ պաշտոնական Թբիլիսին հույս ունի ազատ առևտրի մասին պայմանագիրը ստորագրել մինչև ընթացիկ տարվա վերջ:

Եթե ամեն բան այնպես տեղի ունենա, ինչպես կանխատեսում է վրացական կողմը, ապա պայմանագիրը կարող է ուժի մեջ մտնել արդեն 2017թ. կեսերին, ներքին բոլոր ընթացակարգերի ավարտից հետո, ներառյալ երկու երկրների օրենսդիր մարմինների կողմից պայմանագրի վավերացումը:

ՉԺՀ առևտրի նախարարության տեղեկատվությամբ՝ ազատ առևտրի մասին համաձայնագիրը, որը բաղկացած է 17 գլխից, երկու կողմին էլ հնարավորություն կտա «օգտվել զրոյական սակագնից արտադրանքի մեծամասնության պարագայում»: Ըստ ՉԺՀ առևտրի նախարար Գաո Հուչենի՝ չինացի սպառողները Վրաստանից բարձրորակ արտադրանք (գինիներ, գյուղտնտարտադրանք և այլն) ստանալու ավելի մեծ իրավունք կստանան, իսկ վրացի սպառողները համեմատաբար էժան արդյունաբերական արտադրանք կստանան ՉԺՀ-ից:

Վրաց պաշտոնական անձինք իրենց հերթին նշում են, որ վրացական գինին և գյուղտնտարտադրանքը մտնում են այն արտադրանքների թվի մեջ, որոնք չինական շուկա կմտնեն «զրոյական սակագնով», հենց որ համաձայ-

նագիրը մտնի ուժի մեջ, «առանց որևէ անցումային ժամանակաշրջանի», ինչը շատ կարևոր է Վրաստանի արտաքին առևտրի զարգացման և դիվերսիֆիկացման համար:

Մեկնաբանելով այս իրադարձությունը՝ Վրաստանի վարչապետ Գ.Կվիրիկաշվիլին ասել է, որ Չինաստանի հետ համաձայնագիրը «հսկայական ձեռքբերում է, որը մեծ նշանակություն կունենա Մետաքսի ճանապարհի զարգացման համար»:

Տեղեկանք. Վրաստանի էկոնոմիկայի նախարարության Գինու գործակալության տեղեկատվության համաձայն՝ 2016թ. անցած ութ ամիսներին Վրաստանը ՀԺՀ է արտահանել 3,36 մլն շիշ գինի (0,75լ տարողությամբ), ինչը 2,4 անգամ ավելի է, քան 2015թ. նույն ժամանակամիջոցում, երբ ՀԺՀ էր արտահանվել 1,18 մլն շիշ գինի:

Այսպիսով, այդ ժամանակաընթացքում ՀԺՀ-ն եղել է երկրորդ խոշոր շուկան վրացական գինու արտահանման համար (Ռուսաստանից հետո, որտեղ այդ նույն ընթացքում ուղարկվել է 14,6 մլն շիշ):

Այս առնչությամբ պետք է նշել նաև այն փաստի մասին, որ չինական *China Tianchen Engineering Corporation* խոշոր ընկերությունը, Վրաստանի նավթի և գազի կորպորացիայի (*GOGC*) ֆինանսավորմամբ, սկսել է Վրաստանում համակցված ցիկլով նոր ջերմաէլեկտրակայանի՝ «Գարդաբանի ջերմակայան-2»-ի կառուցումը (Քվեմո Քարթլի), որի հզորությունը կազմելու է 230 մվտ, իսկ արժեքը՝ $159 մլն:

Վրացական կողմի տեղեկատվությամբ՝ նոր կայանը կգործարկվի 2020թ. ձմռանը: Ինչպես նշում են Վրաստանի նավթի և գազի կորպորացիայում, էլեկտրաէներգիայի պահանջարկը Վրաստանում կայուն աճում է, ինչի հետ կապված՝ բարձրարդյունավետ և խնայողական համակցված ջերմաէլեկտրակայանների կառուցումը երկրի կառավարության գերակայություններից մեկն է համարվում:

«Նման նախագծերի իրագործումն առաջնահերթ է, քանի որ ձմռանն անհնար է բավարարել աճող պահանջարկը գեներացման տեղական օբյեկտներով»,- ասվում է Վրաստանի վարչապետ Գ.Կվիրիկաշվիլու հայտարարության մեջ: Ըստ նրա՝ այս նախագիծը «կարևոր քայլ է երկրի էներգաանկախացման հաստատման ճանապարհին»:

Գարդաբանի առաջին համակցված ցիկլով ջերմաէլեկտրակայանը՝ 237 մվտ հզորությամբ, շահագործման է հանձնվել 2015թ. օգոստոսին: ՋԷԿ շահագործման ժամկետը, որի ակնկալվող տարեկան թողարկումը կազմելու է 1,618 մլրդ կվտ/ժ, 25 տարի է: ՋԷԿ-ը կառուցել է թուրքական Calik Enerji խոշոր ընկերությունը: Շինարարության վրա ծախսվել է $231 մլն:

ԻՐԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. հոկտեմբեր

Ռոման Կարապետյան*

Մերձավոր Արևելքում ռազմաքաղաքական իրադրության կտրուկ տեղաշարժերը տարածաշրջանի ուժային կենտրոնների արտաքին քաղաքականության առջև նոր մարտահրավերներ են նետում: Իրանը, համահունչ տարածաշրջանային գործընթացներում ակտիվ ներգրավվածություն ունենալու արտաքին քաղաքական հայեցակարգին, ևս անմասն չի մնում այս տեղաշարժերից:

Իրան-տարածաշրջան. Տարածաշրջանում ակտիվ ռազմական կետերը շարունակում են մնալ Իրանի արտաքին քաղաքականության հիմնական մարտահրավերները: Սաուդյան Արաբիայի գլխավորությամբ ձևավորված արաբական կոալիցիայի զինված ուժերը հոկտեմբերի 9-ին ավիացիոն հարվածներ են հասցրել Եմենի մայրաքաղաք Սանային, ինչի հետևանքով խաղաղ բնակչության շրջանում եղել են 700-ից ավելի զոհ և վիրավոր: Պաշտոնական Թեհրանը հայտարարեց, որ Եմենում արաբական երկրները գործում են միջազգային անտարբեր լռության պայմաններում, և կոչ է արել մարդասիրական օգնություն տրամադրել Եմենին՝ պատրաստակամություն հայտնելով միանալու դրան:

Հետաքրքիր իրադարձություններ ծավալվեցին Պարսից ծոցի երկրների արտգործնախարարների հոկտեմբերի 14-ի հանդիպումից հետո: Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցելու հրավիրված Թուրքիայի արտաքին գերատեսչության ղեկավար Մևլութ Չավուշօղլուն Սաուդյան Արաբիայի գործընկերոջ հետ համատեղ մամուլի ասուլիսում հայտարարեց, որ Իրանը պետք է դադարեցնի բացասական դերակատարությունը տարածաշրջանում:

Մասնավորապես, նա քննադատել է Իրաքում, Եմենում և Սիրիայում վարած քաղաքականության համար՝ առաջին հերթին պաշտոնական Թեհ-

---

* ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դասախոս:

րանին մեղադրելով վերջիններիս ներքին գործերին միջամտելու մեջ: Ավելին, Իրաքի շիաներին ֆինանսավորելու քաղաքականությունը Չավուշօղլուն համեմատել է Իսլամական պետության գործունեության հետ: Եթե հաշվի առնենք նախորդ ամիսներին Իրանի և Թուրքիայի միջև բավական սերտ քաղաքական երկխոսությունը, Սիրիայի հարցում ձեռք բերված որոշակի համաձայնությունները, ապա այս հայտարարությունն առնվազն զարմանալու տեղիք է տալիս: Կարծում ենք, սրանով Թուրքիան շեշտադրում է տարածաշրջանում իր քաղաքական համակրանքը սուննի մահմեդական երկրների, մասնավորապես՝ Սաուդյան Արաբիայի նկատմամբ:

Թուրքիայի այս վարքագիծը նաև ցույց է տալիս, որ նրա համար դաշնակիցներն ունեն միայն դրվագային նշանակություն, և իրեն ցանկալի սցենարով հարցերի կարգավորումից հետո վերջիններիս վրա կարելի է նաև ցեխ շպրտել: Պաշտոնական Թեհրանի՝ Թուրքիային ուղղված առաջին արձագանքը եղավ այն, որ երկրի արտաքին գերատեսչության ղեկավար Ջավադ Զարիֆը հանդես եկավ հայտարարությամբ՝ պահանջելով Թուրքիայից դադարեցնել ռազմական գործողությունները Սիրիայում:

Հոկտեմբերի 21-ին Իրանի առաջնորդ Ալի Խամենեիի ավագ խորհրդական Ալի Վելայեթին Բաղդադում հանդիպում ունեցավ Իրաքի նախագահ Մուհամադ Ֆուադ Մասումիի հետ: Հանդիպման ժամանակ Վելայեթին շեշտել է, որ Իրանը շարունակելու է օգնություն ցույց տալ Իրաքին ահաբեկչության դեմ պայքարի և տարածաշրջանում կայունության հաստատման հարցերում: Կարծում ենք, որ այս հաղորդագրությունն ուղղված էր Թուրքիային ու Սաուդյան Արաբիային՝ ցույց տալու Իրանի վճռականությունն Իրաքի հարցում: Վելայեթին հանդիպումներ է ունեցել նաև Իրաքի հոգևոր առաջնորդի և վարչապետի հետ՝ քննարկելով նաև Մոսուլի շրջանը Իսլամական պետության գրոհայիններից ազատելու հարցը:

Հոկտեմբերի 24-ին Իրանի արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ Բահրամ Կասեմին մամուլի ասուլիսի ժամանակ քննադատել է Թուրքիային Իրաքի Մոսուլի շրջանում ծավալած ռազմական գործողությունների համար: Հիշեցնենք, որ հոկտեմբերի 21-ին Թուրքիան այս շրջանում մեկնարկեց տարածքի ազատագրման շուրջ լայնածավալ ռազմական գործողություններ: Կասեմին նշել է, որ Մոսուլն Իրաքի անբաժանելի մասն է, ուստի

այստեղ ծավալվող ցանկացած գործողություն պետք է համաձայնեցվի պաշտոնական Բաղդադի հետ: Կարծում ենք, Իրանն առաջին հերթին զգուշանում է, որ Թուրքիան կարող է վերահսկողություն սահմանել Մոսուլի շրջանի նավթային ենթակառուցվածքների վրա. չէ՞ որ Թուրքիան երբեք էլ չի թաքցրել իր «համակրանքը» նավթով հարուստ այս տարածաշրջանի նկատմամբ:

Իրան-Եվրոպա. Եվրոպայի հետ երկխոսությունում նույնպես կան բազմաթիվ դժվարություններ: Դեռևս սեպտեմբերի 30-ին Գերմանիայի փոխկանցլեր, էներգետիկայի և էկոնոմիկայի նախարար Զիգմար Գաբրիելը Թեհրան կատարելիք այցին ընդառաջ գերմանական պարբերականներից մեկին տված հարցազրույցում ասել էր, որ Գերմանիայի և Իրանի միջև հարաբերությունները կկարգավորվեն և ավելի կզարգանան, եթե Իրանը ճանաչի Իսրայել պետությունը՝ միևնույն ժամանակ խոստանալով ճնշում գործադրել պաշտոնական Թեհրանի վրա այս հարցում:

Վերջինս խոսել էր նաև Իրանում մարդու իրավունքների հարցերով առկա խնդիրների մասին: Այս հայտարարությունն Իրանի կողմից շատ կոշտ արձագանքի արժանացավ: Պաշտոնական Թեհրանը հայտարարեց, որ իրենք երբեք չեն ճանաչի Իսրայելի օկուպացիոն ռեժիմը, Իրանի հետ հարաբերությունները Գերմանիան պետք է դիտարկի միայն երկկողմ ձևաչափի մեջ, իսկ առաջադրվող նախապայմանները միանգամայն անընդունելի են: Գերմանիայի փոխկանցլերի՝ Թեհրան ժամանելուց հետո վերջինի հետ հանդիպում ունեցավ միայն Իրանի էներգետիկայի նախարար Համիդ Չիթչիանը, իսկ երկրի քաղաքական ղեկավարները հրաժարվեցին ընդունել նրան:

Գերմանացի պաշտոնյան Թեհրանում խոսել է երկու երկրների միջև տնտեսական համագործակցության զարգացմանը խոչընդոտող հարցերի, մասնավորապես՝ բանկային ոլորտում առկա հարցերի կարգավորման անհրաժեշտության մասին: Կողմերը ստորագրել են ֆինանսական, բանկային, ապահովագրության, նավթագազային, տրանսպորտային և այլ ոլորտներին առնչվող 10 հուշագիր և համաձայնագիր:

Տեղեկանք. Չնայած քաղաքական հարաբերություններում առկա դժվարություններին, Գերմանիայի հետ տնտեսական կապերը բավական արագ զարգանում են: Բեռլինում Իրանի դեսպան Ալի Մաջեդին հայտարարել է, որ գերմանական ընկերությունները պատրաստվում են 3 մլրդ եվրոյի ներդրում

կատարել Իրանի տնտեսության մեջ: Իրանական շուկա արտահանողների թվով Գերմանիան ներկայում 5-րդն է՝ զիջելով Չինաստանին, ԱՄԷ-ին, Կորեայի Հանրապետությանը և Թուրքիային: Երկու երկրների միջև առևտրաշրջանառությունը 2015թ. կազմել է 2,2 մլրդ եվրո, նախատեսվում է երկու տարվա ընթացքում այդ ցուցանիշը հասցնել մինչև 6 մլրդ-ի:

Հոկտեմբերի 25-ին Եվրախորհրդարանն ընդունել է բանաձև Իրանի հետ հարաբերությունները կարգավորելու վերաբերյալ: Բանաձևում նշվում է, որ, հաշվի առնելով Իրանի դերակատարությունը տարածաշրջանում, ինչպես նաև վերջինի դրական ներգրավվածությունն այստեղ խաղաղության և անվտանգության ձևավորման գործընթացում, կոչ է անում ընդլայնել Իրանի հետ հարաբերությունները քաղաքական, տնտեսական, էներգետիկ, կրթական, գիտական և հետազոտական, բնապահպանական հարցերում:

Բանաձևում նշվում է նաև, որ Իրանում դեռևս կան խնդիրներ՝ կապված մարդու իրավունքների և հրթիռային փորձարկումների հետ: Որպես առաջին քայլ՝ Եվրախորհրդարանը հանել է իրանական Սադերատ բանկի ունեցվածքի վրա դրված արգելանքը: Պաշտոնական Թեհրանը դրականորեն է արձագանքել այս բանաձևին՝ պատրաստակամություն հայտնելով բանակցությունների մեջ մտնել մարդու իրավունքների հարցերի վերաբերյալ և ներկայացնել իսլամական պատկերացումները:

Ինչ վերաբերում է երկրի հրթիռային պոտենցիալին, ապա ԻԻՀ արտաքին գերատեսչության ներկայացուցիչ Կասեմին ասել է, որ Իրանում հրթիռային փորձարկումներն արվում են երկրի ազգային անվտանգության համատեքստում, և Իրանի պաշտպանողական պոտենցիալը ոչ մի դեպքում քննարկման առարկա չի կարող դառնալ:

Հոկտեմբերի 27-ին Փարիզ մեկնեց Իրանի մեջլիսի պատվիրակությունը՝ ազգային անվտանգության և արտաքին հարցերի հանձնաժողովի ղեկավար Ալադին Բորուջերդիի գլխավորությամբ: Ֆրանսիայի Ազգային ժողովի ներկայացուցիչների հետ քննարկման հիմնական թեման եղել է Մերձավոր Արևելքի իրավիճակը: Կողմերը նշել են, որ անհրաժեշտ է համատեղ ջանքեր գործադրել Սիրիայում, Լիբանանում, Իրաքում և Եմենում առկա հակամարտությունները կարգավորելու ուղղությամբ:

Նույն օրը ԻԻՀ առաջնորդ Ալի Խամենեին Թեհրանում ընդունել է Ֆինլանդիայի նախագահ Սաուլի Նինիստոյին: Հանդիպման ժամանակ Խամենեին հիմնականում խոսել է տարածաշրջանում առկա հակամարտությունների և դրանցում միասնական ջանքեր գործադրելու խնդիրների մասին: Ֆինլանդիայի ղեկավարի այցի շրջանակներում երկու երկրների միջև ստորագրվել են 4 պայմանագրեր, որոնք վերաբերում են էներգետիկ, հաղորդակցության և տեխնոլոգիաների, շրջակա միջավայրի պաշտպանության և ներդրումների ոլորտներին: Նշենք, որ ներկայում երկու երկրների միջև առևտրաշրջանառության ծավալը կազմում է ընդամենը $50 մլն, որը նախատեսվում է մոտ ապագայում հասցնել 500 մլն-ի:

Իրան-Ռուսաստան. Իրանը մոտ ապագայում բավական լուրջ ընտրության առջև կարող է կանգնել: Խնդիրն այն է, որ ՌԴ Պետդումայի պատգամավոր, տնտեսական, քաղաքական և ներդրումների հարցերի հանձնաժողովի ղեկավար Եվգենի Ֆեոդորովը հարցում է ուղարկել Իրանի մեջլիս՝ խնդրելով քննարկել Ղրիմը Ռուսաստանի անբաժանելի մաս ճանաչելու հարցը: Ռուս խորհրդարանականի կարծիքով՝ սրանով Իրանին շանս է տրվում ապացուցելու, որ այն Ռուսաստանի ոչ միայն տնտեսական, այլ նաև ռազմաքաղաքական գործընկերն ու ռազմավարական դաշնակիցն է:

Ճանաչելու դեպքում Իրանը կարող է լուրջ խնդիրներ ունենալ արևմտյան երկրների հետ հարաբերություններում, որոնք առանց այդ էլ բավական փխրուն են: Կարծում ենք, այս պահին, երբ Իրանի արտաքին քաղաքականության օրակարգի կարևոր մասերից մեկը Եվրոպայի հետ քաղաքական հարաբերությունների կարգավորումն է, սա տեղին արված հարցում չէր: Պաշտոնական Մոսկվան պետք է գիտակցի դա և չպետք է ճնշում գործադրի Թեհրանի վրա այս հարցում: Հիշեցնենք, որ հարցումից մեկ շաբաթ առաջ Սիրիան Ղրիմը ճանաչել էր ՌԴ անբաժանելի մաս (այն 6-րդն էր Աֆղանստանից, Վենեսուելայից, Կուբայից, Նիկարագուայից, Հյուսիսային Կորեայից հետո):

Իրան-Հայաստան. Հոկտեմբերի 18-ին աշխատանքային այցով Երևանում էր գտնվում Իրանի պաշտպանության փոխնախարար Նասրոլա Քալանթարին: ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի հետ հան-

դիպման ընթացքում կողմերը պայմանավորվել են ակտիվացնել երկխոսությունը ռազմաքաղաքական ոլորտում, ինչպես նաև զարգացնել համագործակցությունը ռազմատեխնիկական ոլորտում: Պաշտոնյաները քննարկել են նաև տարածաշրջանային հակամարտություններին և անվտանգությանն առնչվող հարցեր:

Հոկտեմբերի 24-ին Հայաստանի ֆինանսների նախարար Վարդան Արամյանը հանդիպում է ունեցել ՀՀ-ում ԻԻՀ դեսպան Սեյեդ Քազեմ Սաջադիի հետ: Հայ պաշտոնյան նշել է, որ երկկողմ տնտեսական կապերի ակտիվացման համար անհրաժեշտ է իրականացնել խոշորածավալ ծրագրեր, իսկ որպես առաջին քայլ կարող է լինել Հյուսիս-Հարավ մայրուղու շինարարության ավարտը Հայաստանում, ինչպես նաև էներգետիկ ոլորտում արդեն ձեռք բերված պայմանավորվածությունների կատարումը: Արամյանը նշել է նաև երկկողմ ներդրումների ծավալների մեծացման համար բավարար պայմանների ստեղծման կարևորությունը: Նշենք, որ իրանական ներդրումների ծավալը Հայաստանում կազմում է $3 մլն, մինչդեռ հայկական ներդրումներն Իրանում կազմում են $250 մլն:

Իրանի արտաքին քաղաքականության այլ ուղղություններ. Հոկտեմբերի 5-ին Վիետնամ կատարած եռօրյա այցով Իրանի նախագահ Հասան Ռոհանին սկսեց իր շրջայցը Հարավարևելյան Ասիայի երկրներ: Կողմերը ստորագրել են վիզային ռեժիմի վերացման, բանկային ոլորտում համագործակցության հաստատման ու զարգացման մասին պայմանագրեր: Ներկայում երկու երկրների միջև առևտրաշրջանառության ծավալը կազմում է $350 մլն, որը նախատեսվում է հասցնել 2 մլրդ-ի: Ռոհանիի հաջորդ կանգառը եղավ Մալայզիայում: Կուալա Լումպուրում գործընկեր Նեջիպ Թան Աբդուրեզակի հետ հանդիպման ժամանակ նախագահները պայմանավորվել են վերականգնել տնտեսական և քաղաքական հարաբերությունները՝ դրանք հասցնելով մինչպատժամիջոցային մակարդակի:

Ռոհանիի այցը տարածաշրջան ավարտվեց Թաիլանդում: Վերջինիս հետ Իրանի առևտրաշրջանառության ծավալները կազմում են $310 մլն, որից շուրջ 217 միլիոնը Թաիլանդից ներկրումն է: Նախագահները պայմանավորվել են զարգացնել տնտեսական հարաբերությունները, իսկ որպես առաջին

քայլ՝ առաջիկայում 100 անուն ապրանքների վրայից հանել մաքսային վճարները: Ռոհանին Բանգկոկում անցկացվող Ասիական համագործակցության երկխոսության ֆորումի շրջանակներում հանդիպել է նաև Չինաստանի փոխնախագահ Լի Յուանչաոյի հետ: Ռոհանին կոչ է արել լիարժեք իրագործել նախկինում երկու երկրների միջև ձեռք բերված համաձայնությունները, մեծացնել չինական ներդրումներն Իրանում:

Տեղեկանք. Ընթացիկ տարում երկու երկրների միջև առևտրաշրջանառության ծավալները կտրուկ նվազել են: Առաջին երեք եռամսյակում երկու երկրների միջև առևտրաշրջանառության ծավալը նվազել է միջինը 17%-ով՝ կազմելով $22,1 մլրդ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 26,6 մլրդ-ի դիմաց:

Հոկտեմբերի 24-ին Թեհրան ժամանեց Վենեսուելայի նախագահ Նիկոլաս Մադուրոն: Իրանի առաջնորդ Խամենեիի հետ հանդիպման ժամանակ քննարկման հիմնական առարկան եղել է նավթի գնի հարցը: Խամենեին մեղադրել է արևմտյան երկրներին նրանում, որ վերջիններս ցանկանում են նավթի գների միջոցով խառնվել նավթ արդյունահանող սուվերեն երկրների ներքին գործերին:

ԱՄՆ-ի հետ հարաբերությունների կարգավորման հեռանկարն էլ ավելի աղոտ տեսք է ստանում: ԱՄՆ-ում քննարկման է դրվել երկրի նոր ռազմավարությունը, որտեղ Իրանը դասվում է սպառնալիք ներկայացնող երկրների շարքին (այստեղ նշվում է, որ ԱՄՆ-ի համար հիմնական սպառնալիքները գալիս են Ռուսաստանից, Չինաստանից, Իրանից և տարբեր ահաբեկչական ու ծայրահեղական խմբավորումներից):

Մայրցամաքը ներկայացնող մեկ այլ պետության՝ Կանադայի արտաքին գործերի նախարար Ստեֆան Դիոնը հայտարարել է, որ Օտտավան քննարկում է Իրանի հետ հարաբերությունների վերականգնման հնարավորությունը, սակայն նշել է նաև, որ իրենց համար կարևոր են ընկերների շահերը և արժեքները: Կարծում ենք՝ սրանով Դիոնը հասկացրել է, որ Կանադան չի գնա Իրանի հետ հարաբերությունների ջերմացման, քանի դեռ կան ակնհայտ խնդիրներ վերջինի ու ԱՄՆ-ի միջև փոխհարաբերություններում:

Փաստորեն, եթե դիտարկենք միջուկային համաձայնագրերից հետո Իրանի նկատմամբ ԱՄՆ քաղաքականության դինամիկան, ապա այն ցույց է

տալիս, որ ԱՄՆ-ը չի փոխում դիրքորոշումը վերջինի նկատմամբ: Այս պարագայում Իրանն ունի մի քանի հիմնական ճանապարհ. զարգացնել տնտեսությունը և հիմքեր ստեղծել տարածաշրջանում լիդերության հասնելու համար՝ ստիպելով միջազգային ուժային կենտրոններին հաշվի նստել իր հետ, աշխարհաքաղաքական շահերում զիջումների գնով հասնել Արևմուտքի հետ հարաբերությունների հիմնային կարգավորման, և վերջապես, համալրել ԱՄՆ «ոչ բարեկամ» կամ «մերժված» երկրների շարքը:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2016թ. հոկտեմբեր

Անուշավան Բարսեղյան[*]

ԱՀ-ի կողմից հռչակված երբեմնի հավասարակշռված արտաքին քաղաքականության հիմնական վեկտորների փոփոխություններն առավել ակնհայտ են դառնում հատկապես ուժային կենտրոնների նկատմամբ դիրքավորման համեմատական վերլուծության համապատկերում: Մասնավորապես, Ռուսաստանի և ԱՄՆ-ի հետ Ադրբեջանի փոխհարաբերությունների զարգացումը հետզհետե ավելի ընդգծված հակադիր համեմատական բնույթ է ստանում: Ռազմատեխնիկական ոլորտում և բազմակողմ ձևաչափերով ՌԴ-ի հետ հարաբերությունների խորացմանը զուգընթաց՝ խորանում են ԱՄՆ-ի հետ տարաձայնությունները, ամենաբարձր մակարդակով հնչում են մեղադրանքներ պաշտոնական Վաշինգտոնի հասցեին:

Եվրոպական կառույցների հետ հարաբերությունների բարելավման ուղղությամբ թեև արվում են որոշակի քայլեր[1], սակայն երկրի ներսում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ոտնահարումները դեռևս լուրջ բացասական ներուժ ունեն Եվրոպայի և Ադրբեջանի միջև լիակատար երկխոսության հաստատման առումով:

Իրանի հետ հետպատժամիջոցային ժամանակահատվածում ձեռք բերված համաձայնությունների իրագործման դանդաղ ընթացքը հետաձգում է դրական սպասումները, իսկ Վրաստանի խորհրդարանական ընտրությունների արդյունքները չեն երաշխավորում Վրաստանում Ադրբեջանի ազդեցության հետագա աճի համար բարենպաստ պայմաններ:

Ադրբեջան-ԱՄՆ. Այս ամիս ԱՄՆ պետքարտուղար Ջ.Քերին հայտարարել էր, որ ԼՂ հակամարտության հաղթահարման համար Հայաստանի և Ադրբեջանի միջև պայմաններ դեռևս չեն ձևավորվել և ներկայումս հակա-

[*] «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի փորձագետ-խորհրդական:

[1] ԱՀ Միլի մեջլիսը, չեղարկելով 2015թ. սեպտեմբերի 14-ին իր իսկ ընդունած օրինագծի որոշ հոդվածներ, վերականգնել է կապերը Եվրախորհրդարանի հետ:

մարտության կարգավորման հեռանկարներ չեն ուրվագծվում, քանի որ Հայաստանի և Ադրբեջանի նախագահները դրան պատրաստ չեն: Այս հայտարարությունը հիմք է հանդիսացել, որպեսզի ԱՀ նախագահ Ի.Ալիևը վերջինիս մեղադրի «Հայաստանի օկուպացիոն քաղաքականությանն աջակցելու» մեջ: Միաժամանակ, Ի.Ալիևը հույս է հայտնել, որ առաջիկայում ամենաբարձր մակարդակով կարվեն համապատասխան շտկումներ, հակառակ դեպքում միջնորդական առաքելությունը կարող է հայտնվել կասկածի տակ: Ջ.Քերիի հայտարարությունը ժամանակային առումով համընկել է Ի.Ալիևի այն խոստովանությանը, որ պաշտոնական Բաքվի վրա ճնշումներ են իրականացվում ԼՂՀ անկախությունը ճանաչելու համար: Ի դեպ, ԱՀ նախագահի կողմից ԼՂ կարգավիճակի մասին հրապարակային քննարկումը ողջունվել է ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ջ.Ուորլիքի կողմից:

Ադրբեջանի կողմից ԱՄՆ իշխանությունների հասցեին մերձիշխանական լրատվամիջոցների միջոցով մեղադրանքներ ներկայացնելու առիթ է հանդիսացել ամերիկյան *The National İnterest* հանդեսի «Լեռնային Ղարաբաղը պատրաստ է ևս մեկ պատերազմի» հրապարակումը, որում ԼՂՀ վարչապետի մամլո խոսնակ Ա.Բեգլարյանը նշում է *C4ISR*[2] դիտարկման համակարգերով առաջնագիծը համալրելու մասին: Համադրելով ԱՄՆ-ի կողմից ԼՂ հակամարտության կողմերին սահմանափակ քանակով և պաշտպանական բնույթի զինտեխնիկա մատակարարելու մասին Ջ.Ուորլիքի հայտարարությունը և *C4ISR* համակարգերի հայտնվելը ԼՂՀ ԶՈՒ-ում՝ ադրբեջանական լրատվամիջոցը ԱՄՆ-ին մեղադրում է ԼՂՀ-ին նորագույն հետախուզական-մշտադիտարկող համակարգեր վաճառելու մեջ:

Ադրբեջան-ԱՄՆ փոխհարաբերությունների ներկա վիճակին բնորոշ գնահատական է տվել Ադրբեջանում ԱՄՆ նախկին դեսպան Ռիչարդ Կոզլարիչը ԱՄՆ կոնգրեսի Մարդու իրավունքների հանձնաժողովում անցկացված «Ադրբեջան. նշանակություն ունե՞ն արդյոք մարդու իրավունքները» թեմայով լսումների ընթացքում: Նախկին դեսպանն ընդգծել է, որ Վաշինգտոնի և Բաքվի փոխհարաբերությունները չեն կրում ռազմավարական բնույթ: Ըստ նրա՝ պաշտոնական Բաքուն սխալմամբ կարծում է, թե ԱՄՆ-ը ավելի շատ ունի

[2] *C4ISR*-ը դասվում է ապագայի ռազմական համակարգերի շարքին (*Future Combat Systems*) և թույլ է տալիս վերահսկել հակառակորդի զինուժի շարժը, մշակված է ամերիկյան *Northrop Grumman* ռազմարդյունաբերական ընկերության կողմից:

Ադրբեջանի կարիքը, քան հակառակը: Ռազմավարական համագործակցության համար անհրաժեշտ են ընդհանուր արժեքներ, իսկ սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն այդ առումով ավելի է հեռացրել կողմերին: Ռ.Կոզլարիչը գտնում է, որ Ադրբեջանի նկատմամբ «խաղաղ դիվանագիտությունը չաշխատեց, պետք է անցում կատարել ակտիվ քաղաքականության»: Դրա տակ ամերիկացի դիվանագետը հասկանում է այնպիսի քայլերի իրագործումը, ինչպիսին են ԱՄՆ դեսպանի ժամանակավոր հետկանչը և ԱՀ վարչակարգի ներկայացուցիչների ֆինանսական միջոցների սառեցումը:

Դժգոհ լինելով ԱՄՆ-ի հետ փոխհարաբերությունների ներկա զարգացման միտումներից և ԱՄՆ նախագահական ընտրություններում կանխատեսելով Հ.Քլինթոնի հաղթանակը՝ Ադրբեջանի իշխանությունների կողմից վերահսկվող լրատվամիջոցները *WikiLeaks* կայքի հրապարակումների հիման վրա տարփողում էին ադրբեջանական լոբբիստների կողմից Հ.Քլինթոնի քարոզարշավը ֆինանսավորելու մասին: Ի դեպ, ԱՀ-ում ԱՄՆ նախկին դեսպան Մ.Բրայզան գտնում էր, որ Հ.Քլինթոնն ավելի արդյունավետ կլինի ԱՄՆ-ի և Ադրբեջանի միջև ամուր կապերի կառուցման գործում:

Ադրբեջան-ՌԴ. ԱՀ իշխանությունների՝ ՌԴ-ին սիրաշահելու վերջին շրջանի քաղաքականության համատեքստում պետք է դիտարկել ռուսական *РИА Новости* լրատվական գործակալությանը տրված հարցազրույցում Ի.Ալիևի ակնարկը հետագայում ԵՏՄ-ին միանալու հնարավորության մասին: Ի.Ալիևը նշել է, որ դրա համար պետք շարժառիթ լինի՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական կամ ցանկացած մեկ ուրիշ բնույթի:

ԵՏՄ-ին միանալու մասին անորոշ հայտարարություններով բավարարվելով հանդերձ՝ Ադրբեջանը զարգացնում է տարածաշրջանային նշանակություն ունեցող տրանսպորտային համագործակցությունը ՌԴ-ի հետ:

Ադրբեջանը և ՌԴ-ն հիմնել են երկաթուղային բեռնափոխադրումներ իրականացնող *АзРусТранс* ՓԲԸ[3] համատեղ ձեռնարկությունը, որի նախագահ Ջ.Գուլիևի հայտարարության համաձայն՝ մոտ ժամանակներս գործարկվելիք Բաքու-Թբիլիս-Կարս և Հյուսիս-Հարավ երկաթուղային նախագծերը թույլ կտան մեծացնել երկաթուղային բեռնափոխադրումները Ռուսաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի, Իրանի և Վրաստանի միջև: Առավել հեռանկարային են

[3] Ադրբեջանական կողմից հանդես է եկել «Ադրբեջանական երկաթուղիներ» ՓԲԸ-ն, իսկ ռուսականից՝ *Русагротранс* ՓԲԸ-ն:

համարվում հացահատիկի փոխադրումները ՌԴ-Իրան, ՌԴ-Վրաստան և ՌԴ-Թուրքիա ուղղություններով: Մասնավորապես, նորաստեղծ ընկերությունը 2020թ. նախատեսում է Ադրբեջանի տարածքով տարեկան փոխադրել 2 մլն տոննա բեռ:

Տնտեսական համագործակցության խթանման նպատակով Բաքվում անցկացվել է ադրբեջանա-ռուսական VII միջտարածաշրջանային ֆորումը, որին մասնակցել են ՌԴ և ԱՀ պաշտոնատար անձինք, այդ թվում՝ խորհրդարանների անդամներ, ինչպես նաև արդյունաբերության, զբոսաշրջության, գյուղատնտեսության, շինարարության, առևտրի, խորհրդատվության, բեռնափոխադրումների, դեղագործության, տեղեկատվական տեխնոլոգիաների, ֆինանսների և ոլորտների գործարարներ: Ֆորումի շրջանակներում քննարկվել են ՌԴ-ի և ԱՀ-ի միջև տարածաշրջանների և սահմանային համագործակցությանը, հեռանկարային ենթակառուցվածքային նախագծերին, համատեղ հումանիտար միջավայրի խնդիրներին և հեռանկարներին առնչվող հարցեր:

Ադրբեջան-Վրաստան. Ադրբեջանի և Վրաստանի փոխհարաբերություններին անդրադառնալիս, բացի միջպետական կապերից, պետք է հաշվի առնել նաև Վրաստանում ադրբեջանական տարաբնույթ ազդեցությունը, որի հիմնական բաղադրիչներից են միջազգային համատեղ տրանսպորտային և էներգետիկ նախագծերի իրականացումը, Վրաստանում ադրբեջանական տնտեսական զգալի դերակատարությունը և ադրբեջանական հոծ համայնքը: Բնականաբար, զուգակցելով ազդեցության բոլոր լծակները՝ Ադրբեջանը, առերևույթ չեզոք դիրք գրավելով հանդերձ, չէր կարող ձեռնպահ մնալ Վրաստանի խորհրդարանական ընտրություններում սեփական թեկնածուներին սատարելուց: Դրա առավել վառ դրսևորումներից էր Մառնեուլի շրջանում մեծամասնական ընտրակարգով ընդդիմադիր «Ազգային շարժում» կուսակցության ադրբեջանցի թեկնածու Ակմամեդ Իմամկուլիևի ստացած բավական մեծաթիվ ձայները մի տարածաշրջանում, որտեղ 25 տարի շարունակ միշտ և անվիճելիորեն հաղթել են իշխանական կուսակցություններն ու թեկնածուները: Այստեղ առաջին անգամ ընդդիմադիր թեկնածուն ավելի շատ ձայն է հավաքել, քան իշխանության ներկայացուցիչը: Սա կարող էր հնարավոր լինել առավելապես պաշտոնական Բաքվի ուղղորդման արդյունքում՝ հաշվի առնելով, որ տեղի բնակչությունն ավելի շատ դիտում է Ադրբեջանից սփռվող հեռուստաընկերությունները և հաճախ են նշված տարածաշրջան այցելում

ադրբեջանական հատուկ պատվիրակները: Բնականաբար, հնարավորության դեպքում ԱՀ իշխանությունները կցանկանային Վրաստանում կրկին իշխանության ղեկին տեսնել Մ.Սաակաշվիլուն և նրա կուսակցությանը, որի իշխանության տարիներին Վրաստանում ադրբեջանական քաղաքատնտեսական ազդեցությունը բազմապատկվեց: Ի պատիվ Վրաստանի ներկա իշխանությունների՝ հարկ է նշել, որ հաջողվեց կանխել ազգային ակնհայտ նրբերանգներ ունեցող հնարավոր խժդժությունները և խաղաղ պայմաններում անցկացնել խորհրդարանական ընտրությունների երկրորդ փուլը:

Վրաստանի և Ադրբեջանի փոխհարաբերությունների վրա որոշակի ազդեցություն կարող է ունենալ նաև «Հայրենասերների ալյանս» ազգայնական կուսակցության հայտնվելը Վրաստանի խորհրդարանում: «Հայրենասերները» հատկապես վտանգավոր են համարում Վրաստանում թուրք-ադրբեջանական աճող ազդեցությունը և նախընտրական պայքարում հանդես են եկել իրավիճակը շտկելու կոչերով:

Միաժամանակ, Ադրբեջանը չի խորշում հայ-ադրբեջանական հակամարտության մեջ Վրաստանին ներքաշելու և վրացական հանրությունում հակահայկական տրամադրություններ հրահրելու փորձերից: Այդ համատեքստում կարելի է դիտարկել «Ղարաբաղի ազատություն» կազմակերպության կողմից Թբիլիսիում ԼՂ հակամարտությանը նվիրված միջոցառման անցկացումը, որի ընթացքում Վրաստանում ադրբեջանցիների ազգային կոնգրեսի նախագահը հայտարարել է, որ երկրում բնակվող ադրբեջանցիները պատրաստ են անել ամեն հնարավորը Ղարաբաղի ազատագրման համար: «Ղարաբաղի ազատություն» կազմակերպության նախագահի առաջին տեղակալ Իլգար Ալին և վրացի լրագրող Նինո Շալաբերիձեն նույնպես հանդես են եկել հակահայկական կոչերով՝ ընդգծելով «Հայաստանի դեմ Վրաստանի և Ադրբեջանի համատեղ պայքարելու անհրաժեշտությունը»:

Ադրբեջան-Իրան. ԱՀ նախագահը հաստատել է ս.թ. օգոստոսի 7-ին Իրանի և Ադրբեջանի միջև ստորագրված «Հյուսիս-հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի իրականացման ոլորտում համագործակցության մասին» և «Էլեկտրոնային անվտանգության ոլորտում համագործակցության մասին» հուշագրերը:

Ադրբեջանն Իրանի հետ հարաբերությունների զարգացման միջոցով փորձում է բարենպաստ պայմաններ ստեղծել նաև Նախիջևանի ԻՀ տնտե-

սության աշխուժացման համար: Այդպիսի նպատակ է հետապնդում Արաքս գետի վրա իրանական Մարազադ և ադրբեջանական Օրդուբադ քաղաքներում հէկերի համատեղ կառուցման նախագիծը[4], որը, ըստ «Ազերէներջի» ԲԲԸ ղեկավար Է.Փիրվերդիևի, կբարձրացնի Նախիջևանի ԻՀ էներգետիկ կայունությունը և արտահանման հնարավորությունները: Նախիջևանի և Իրանի կապերի զարգացմանը կնպաստի նաև Նախիջան-Թավրիզ-Մեշխեդ երկաթուղային գծի գործարկումը մոտ ժամանակներս, ինչի մասին հայտարարել է ԱՀ-ում ԻԻՀ դեսպան Ջ.Ջահանգիրզադեն:

Իրանի հետ տնտեսական հարաբերությունների զարգացման և քաղաքական տարաձայնությունների հարթման միտումների համապատկերում հատկապես ուշագրավ է հնչում ԱՀ Միլի մեջլիսի պատգամավոր, Ադրբեջան-Իսրայել միջխորհրդարանական աշխատանքային խմբի ղեկավար Եվդա Աբրամովի հայտարարությունն այն մասին, որ 2012թ. Ադրբեջանում անցկացված «Եվրատեսիլ» երգի մրցույթի ժամանակ իսրայելական հետախուզական «Մոսադ» ծառայության գործակալները Կասպից ծովում Իրանից դեպի Ադրբեջան ուղևորվող ահաբեկչական խումբ են չեզոքացրել: Ըստ նրա, նշված խումբը մտադրություն է ունեցել ահաբեկչություններ և զանգվածային սպանություններ իրականացնել Բաքվի *Hilton Baku* և *Marriott* հյուրանոցներում: Ըստ Ե.Աբրամովի, Իսրայելի հատուկ ծառայություններն ակտիվ մասնակցություն են ունեցել նաև 2015թ. Բաքվում անցկացված Եվրոպական խաղերի անվտանգության ապահովման գործում:

Ադրբեջան-Պակիստան. Պակիստանի վարչապետ Նավազ Շարիֆի Բաքու կատարած պաշտոնական այցի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ Ադրբեջանը Պակիստանից մոտ $500 մլն-ի ժամանակակից և բարձրտեխնոլոգիական զենքեր է գնելու: Պակիստանն Ադրբեջանի՝ միջուկային զենք ունեցող ամենամոտ դաշնակիցն է և այն երկու երկրներից մեկը, որը պատրաստ է անվերապահորեն և գործուն կերպով աջակցել Ադրբեջանին Լեռնային Ղարաբաղում պատերազմի վերսկսման դեպքում: Ապրիլյան պատերազմի ժամանակ Պակիստանը միակ պետությունն էր (նույնիսկ Թուրքիան ձեռնպահ մնաց նման քայլից), որը ՊՆ նախարարի մակարդակով հայտարարեց ԼՂ հակամարտության գոտի զորք ուղարկելու պատրաստա-

[4] Նշված հէկերի կառուցման մասին հուշագիրը ստորագրվել է 2015թ. դեկտեմբերին, ինչից հետո Իրանի և ԱՀ խորհրդարանները հաստատել են այն:

կամության մասին: Նախկինում ևս Ադրբեջանը Պակիստանից մեծ քանակությամբ սպառազինություն է գնել, այդ թվում, պակիստանյան լրատվամիջոցների համաձայն, 750 կմ հեռահարությամբ *Shahin-1* և դրա արդիականացված *Hatf-1* տեսակի հրթիռներ:

Ընդլայնվող ռազմական համագործակցության շրջանակներում կողմերը քննարկել են համատեղ զինավարժությունների և ռազմական արտադրության ծրագրերը: Պակիստանի վարչապետը ձեռնպահ չի մնացել նաև քաղաքական հայտարարություններից՝ նշելով, որ «քաշմիրյան և ԼՂ հարցերում փոխադարձ աջակցությունն ապացուցում է, որ երկու երկրների դիրքորոշումները համընկնում են: Պակիստանը կողմնակից է ադրբեջանական հողերի լիակատար ազատագրմանը, հայկական ուժերի դուրսբերմանը և փախստականների վերադարձին»:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2016թ. հոկտեմբեր

Հայկ Գաբրիելյան[*]

Թուրքիա-Ռուսաստան. Թուրքիայի էկոնոմիկայի նախարար Նիհաթ Զեյբեքչին Ռուսաստանի տնտեսական զարգացման նախարար Ալեքսեյ Ուլյուկաևի հետ հանդիպումից հետո հայտարարել է, որ Թուրքիան բանակցություններ է վարում Ռուսաստանի հետ ավելի վաղ սահմանված վիզային սահմանափակումները չեղարկելու հարցով: Զեյբեքչիի խոսքերով՝ Ռուսաստանի և Թուրքիայի միջև ազատ առևտրի գոտու ստեղծման համաձայնությունը կարող է ստորագրվել 2017թ. վերջին, իսկ ստեղծվող ռուս-թուրքական ներդրումային հիմնադրամի կապիտալը կազմելու է $1 մլրդ (յուրաքանչյուր կողմի ներդրումը կազմելու է $500 մլն): Զեյբեքչին չբացառեց, որ ռուսաստանցի զբոսաշրջիկները կկարողանան Թուրքիայում վճարումներ կատարել ռուբլով:

Թուրքիայի վարչապետ Բինալի Յըլդըրըմը Ռուսաստանի վարչապետ Դմիտրի Մեդվեդևի հետ հեռախոսազրույցի արդյունքներով հայտարարեց, որ իրենք պայմանավորվել են հանդիպել մոտ ժամանակներս և հարաբերությունների բարելավման համար կանեն ամեն հնարավոր բան: Նա խոստովանեց, որ կարգավորման գործընթացն ընթանում է ավելի արագ, քան իրենք ակնկալում էին: Յըլդըրըմը նաև հայտարարեց, որ Սիրիայի ճգնաժամի հարցում մերձեցել են Մոսկվայի և Անկարայի դիրքորոշումները, և որ Ռուսաստանը «Եփրատի վահան» գործողության շրջանակներում Թուրքիայի գործողությունները համարում է խելամիտ ու արդար: Ի պատասխան՝ Ռուսաստանի նախագահի մամլո քարտուղար Դմիտրի Պեսկովը հայտարարեց, որ Ռուսաստանն ու Թուրքիան տարբեր մոտեցումներ ունեն Սիրիայի ճգնաժամի կարգավորման հանդեպ, սակայն երկխոսությունն ընթացքի մեջ է:

Ամսվա սկզբին թուրքական կողմի նախաձեռնությամբ հեռախոսազրույց տեղի ունեցավ Ռուսաստանի և Թուրքիայի նախագահներ Վլադիմիր Պուտի-

[*] Թուրքագետ:

նի և Ռեջեփ Էրդողանի միջև, որի ժամանակ քննարկվեցին սիրիական ճգնաժամի կարգավորումը, առևտրային-տնտեսական կապերի վերականգնումը, Աքքույուի ԱԷԿ-ի և «Թուրքական հոսք» գազատարի նախագծերի իրագործումը: Օրեր անց Պուտինը մեկնեց Ստամբուլ՝ մասնակցելու Համաշխարհային էներգետիկ կոնգրեսին, և նույն հարցերը քննարկեց Էրդողանի հետ: Պուտինի և Էրդողանի հանդիպման արդյունքներով Ռուսաստանի և Թուրքիայի էներգետիկայի նախարարներ Ալեքսանդր Նովակն ու Բերաթ Ալբայրաքը ստորագրեցին «Թուրքական հոսք» գազատարի վերաբերյալ միջկառավարական համաձայնագիրը: Բանակցությունների արդյունքներով պայմանավորվածություններ ձեռք բերվեցին «Թուրքական հոսքի» նախագծի շրջանակներում Թուրքիային ռուսական գազի զեղչ հատկացնելու, տարեկան հավելյալ 2 մլրդ մ^3 գազ մատակարարելու, Ռուս-թուրքական բարձր մակարդակի համագործակցության խորհրդի հերթական նիստը ձմռանն անցկացնելու, հետագայում Ռուսաստանում թուրքական գյուղմթերքն ընդունելու, Աքքույուի ԱԷԿ կառուցման աշխատանքներն ակտիվացնելու, երկու երկրներում փոխադարձաբար մշակույթի և զբոսաշրջության տարիներ հայտարարելու, տիեզերական (արբանյակների), պաշտպանական արդյունաբերության ոլորտում համագործակցությունն ընդլայնելու շուրջ: Պուտինը նաև հայտարարեց, որ Էրդողանի հետ բավական մեծ ժամանակ են տրամադրել նաև տարածաշրջանի խնդիրների քննարկմանը:

Պուտինն ու Էրդողանը քննարկեցին Մոսուլն ԻՊ-ից ազատագրելու գործողությունը, Սիրիայում «Ջաբհաթ ան-Նուսրա» խմբավորման գործունեությունը և ընդհանրապես Սիրիայի հարցը: Հոկտեմբերին Թուրքիայի արտգործնախարար Մևլյութ Չավուշօղլուն հայտարարեց, որ թուրք և ռուս զինվորականները մշտական կապի մեջ են և Սիրիայի հարցով փոխանակում են հետախուզական տվյալներ: Նա ընդգծեց, որ Թուրքիան անհրաժեշտության դեպքում ցամաքային ռազմական գործողություն կսկսի Իրաքում:

Գրեթե մեկամյա ընդմիջումից հետո վերսկսվեց Ղրիմի և Թուրքիայի միջև լաստանավային հաղորդակցությունը. ռուսական «Վարյագ» լաստանավը Սևաստոպոլից մեկնեց Զոնգուլդակ: Ղրիմի և Թուրքիայի միջև լաստանավային հաղորդակցությունը և գործարար շփումները դադարեցվել էին 2015թ. նոյեմբերին՝ ռուսական «Սու-24» ռմբակոծիչը խոցելուց հետո:

Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը Երևանում հայտարարեց, որ Թուրքիան «կարող է դրական դեր խաղալ» ԼՂ խնդրի կարգավորման գործընթացում. «Մենք մշտապես հաշվի ենք առնում, որ Թուրքիան կարող է դրական դեր խաղալ՝ ապահովելով ԼՂ ապաշրջափակումը: Եթե հանկարծ Հայաստանն ու Թուրքիան վերադառնան առանց ԼՂ խնդրի հետ կապի իրենց պայմանավորվածությունների իրագործմանը, ապա մենք միայն ուրախ կլինենք: Սակայն մենք զգում ենք, որ ԼՂ խնդրի կարգավորման գործընթացում առաջընթացը կլինի առանցքային, որպեսզի կարգավորվեն հայ-թուրքական հարաբերությունները»: Ապա ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան հայտարարեց. «ԵԱՀԿ ՄԽ ձևաչափի փոփոխության մասին քննարկումներ չեն անցկացվում, սակայն Մոսկվան կարող է միայն ողջունել ԵԱՀԿ ՄԽ անդամ երկրների, այդ թվում նաև Թուրքիայի կառուցողական դերը ԼՂ խնդրի կարգավորման գործընթացում»:

Թուրքիա-ԱՄՆ. Էրդողանը հայտարարեց, որ Թուրքիան 88 արկղ փաստաթուղթ է ուղարկել ԱՄՆ-ին, որոնք առնչվում են Ֆեթհուլա Գյուլենի շարժման գործունեությանը. «Թուրքիայում հուլիսի 15-ի հեղաշրջման փորձը միջազգային ահաբեկչության նոր ձև է: Գյուլենի ահաբեկիչներն այսօր գործում են աշխարհի 170 երկրում»: Թուրքիայի արդարադատության նախարար Բեքիր Բոզդաղն իր հերթին հայտարարեց Գյուլենի՝ ԱՄՆ-ից երրորդ երկիր փախչելու հնարավորության մասին. «Հաշվի առնելով ԱՄՆ-ից արտահանձնվելու հավանականությունը՝ Գյուլենը փնտրում է փախուստի հնարավոր ճանապարհներ: Հոկտեմբերի 26-27-ին կմեկնեմ ԱՄՆ: Ինձ հետ տանելու եմ Գյուլենի վերաբերյալ ամենալիարժեք թղթապանակը (մոտ 500.000 փաստաթուղթ), որը երբևէ պատրաստվել է: Եթե Գյուլենի արտահանձնումը չիրականացվի նման ամբողջական թղթապանակի հիման վրա, ապա ես չգիտեմ, թե էլ ինչ թղթապանակ կարելի է պատրաստել: Թուրքիայի համար Ֆեթհուլա Գյուլենը նույնն է, ինչ ԱՄՆ-ի համար՝ Ուսամա բեն Լադենը: Մենք չենք ցանկանում, որ թուրք-ամերիկյան հարաբերությունները վատթարանան ինչ-որ ահաբեկչի պատճառով»:

Թուրքիայի գլխավոր շտաբի պետ Հուլուսի Աքարը մեկնեց ԱՄՆ՝ մասնակցելու ԻՊ-ի դեմ գործող միջազգային դաշինքի անդամ երկրների Գլխավոր շտաբի պետերի հանդիպմանը, որի հիմնական քննարկման թեման եղել է Մոսուլի հարցը: Իրաքի և Սիրիայի հարցերը քննարկեցին նաև Չավուշօղ-

լուն ու ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերին, Էրդողանն ու ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման: Թուրքիայի իշխանությունները քանիցս հայտարարել են, որ Թուրքիան կարող է մասնակցել Ռաքքան և Մոսուլը ԻՊ-ից ազատագրելու գործողությանը՝ պայմանով, որ դրան չմասնակցեն սիրիական քրդերի ուժերը. «Թուրքիան թույլ չի տա, որ ահաբեկիչներից ազատված տարածքները մնան ահաբեկչական մյուս կազմակերպություններին: Նրանք, ովքեր փորձում են Թուրքիային հեռացնել Մոսուլը ԻՊ-ից վտարելու գործողությունից, սերտորեն կապված են հուլիսի 15-ի ռազմական հեղաշրջման փորձի հետ»:

Բինալի Յըլդըրըմը քննադատեց Դեմոկրատական կուսակցությունից ԱՄՆ նախագահի թեկնածու Հիլարի Քլինթոնին, որը կոչ էր արտահայտվել Սիրիայի քրդերին ամերիկյան զենք տրամադրելուն՝ ԻՊ-ի դեմ պայքարի համար. «Ի՞նչ է դա նշանակում: Մի՞թե Ամերիկան մեր դաշնակիցը չէ: Մի՞թե ՆԱՏՕ-ն մեր դաշնակիցը չէ»: Չավուշօղլուն նույն առիթով հայտարարեց. «*PYD*-ին զենք մատակարարելու դեպքում ԱՄՆ-ը կվերածվի ահաբեկչությանն աջակցող երկրի»: Իսկ Էրդողանը Քլինթոնի խոսքերը որակեց որպես «շատ անհաջող հայտարարություն»՝ նշելով, որ դա «քաղաքական փորձի բացակայության» հետևանք է. «Ո՞վ է ՆԱՏՕ-ի գծով ԱՄՆ դաշնակիցը՝ Թուրքիա՞ն, թե՞ *YPG*-ը»:

ԱՄՆ պետդեպարտամենտն իր հայրենակիցներին նախազգուշացրեց, որ Թուրքիայում ահաբեկչությունների սպառնալիքը նախկինի պես բարձր է, խորհուրդ չտվեց այցելել Թուրքիայի հարավ-արևելք, մտահոգություն հայտնեց «Ջումհուրիյեթ» թերթի գլխավոր խմբագրի ձերբակալման և Թուրքիայում ընդդիմադիր ԶԼՄ-ի վրա պաշտոնական աճող ճնշման համար:

Թուրքիա-ԵՄ. Էրդողանը ԵՄ-ին մեղադրեց տված խոստումները չկատարելու մեջ՝ նշելով, որ Թուրքիան 53 տարի կանգնած է ԵՄ դռան մոտ, որ ԵՄ-ը խոստացել էր հոկտեմբերին վերացնել վիզային ռեժիմը, սակայն դա տեղի չի ունեցել, և խոստացել էր Թուրքիային տրամադրել 3 մլրդ եվրո, սակայն ցայժմ իրենք ստացել են միայն 179 մլն եվրո: Թուրքիայի առևտրի նախարար Բյուլենթ Թյուֆենքջին իր հերթին հայտարարեց, որ ԵՄ-ին անդամակցելու վերաբերյալ բանակցային գործընթացը հիշեցնում է ձգձգվող նշանադրություն. «Մենք շատ երկար տարիներ կրում ենք ԵՄ մատանին, և այդքան տարիների սպասումներից հետո բարդ է ասել, թե արդյոք կլինի հարսանիք»: Սակայն Ավստրիայի արտգործնախարար Սեբաստիան Կուրցը հայտարարեց, որ

Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին բացառված է՝ ընդգծելով, որ գոյություն ունի մեծ տարբերություն, թե ինչ է մտածում եվրոպացի քաղաքական գործիչների մեծ մասը և թե ինչ են հայտարարում հրապարակավ: Կուրցն առաջարկեց ամբողջովին չհրաժարվել Թուրքիայի հետ համագործակցությունից, և նրա համար սահմանել «անհատական գործընկերության» ռեժիմ:

Եվրահանձնաժողովը խորին մտահոգություն հայտնեց Թուրքիայում Դիարբեքիրի քաղաքապետ Գյուլթեն Քըշանաքի և ավագանու անդամ Ֆըրաթ Անլընի ձերբակալման կապակցությամբ, իսկ ԵՄ դիվանագիտության ղեկավար Ֆեդերիկա Մոգերինին հայտարարեց, որ վերջին 15 ամսվա ընթացքում Թուրքիայի հարավ-արևելքում բռնությունները չեն դադարում: Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդը և Եվրախորհրդարանի նախագահ Մարտին Շուլցը խիստ մտահոգիչ համարեցին Թուրքիայում «Ջումհուրիյեթ» թերթի և նրա աշխատողների դեմ իրականացվող գործողությունները՝ ընդգծելով, որ «զանգվածային զտումներն» ունեն քաղաքական դրդապատճառներ:

Հոկտեմբերի սկզբին Գերմանիայի խորհրդարանի՝ պաշտպանության հարցերով հանձնաժողովի անդամներն այցելեցին «Ինջիրլիքի» ավիաբազա և հանդիպեցին գերմանացի զինծառայողների հետ, որոնք մասնակցում են ԻՊ-ի դեմ միջազգային դաշինքի մղած պայքարին: Թուրքիայի կառավարության պաշտոնյաները, սակայն, հրաժարվեցին հանդիպել գերմանական պատվիրակության անդամների հետ՝ չտալով որևէ պարզաբանում: Ապա հաղորդվեց, որ «Ինջիրլիքում» գտնվող Գերմանիայի ռազմաօդային ուժերի «Տորնադո» 6 կործանիչները շարքից դուրս են եկել տեխնիկական անսարքության պատճառով:

Բեռլինում Թուրքիայի դեսպան Հուսեին Ավնի Քարսլըօղլուն 4 ամիս 4 օր ընդմիջումից հետո վերադարձավ Բեռլին: Նա Գերմանիայից Թուրքիա էր կանչվել այն բանից հետո, երբ Բունդեսթագը հունիսի 2-ին բանաձև էր ընդունել Հայոց ցեղասպանության ճանաչման մասին: Գերմանիայի ԱԳՆ-ն ողջունեց Թուրքիայի դեսպանի վերադարձը՝ դա որակելով դրական կարևոր քայլ:

Թուրքիայի ԱԳՆ խոսնակ Թանժու Բիլգիչը դատապարտեց Ֆրանսիայի Սենատի կողմից Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագծի ընդունումը: Բիլգիչը հիշեցրել է, որ Ֆրանսիայի Սենատը 156 կողմ, 146 դեմ ձայների հարաբերակցությամբ այդ օրինագիծն ընդունել է հոկտեմբերի 14-ին, իսկ հուլիսի 6-ին այն ընդունել էր Ֆրանսիայի Ազգային ժողովը: Բիլգի-

չի խոսքով՝ այդ օրինագիծը «հակասում» է ՄԻԵԴ նախադեպին (Դողու Փերինչեքի գործով դատավճռին):

Թուրքիա–Իրան. Մևլյութ Չավուշօղլուն Էր Ռիյադում Պարսից ծոցի երկրների արտգործնախարարների հանդիպումից հետո Իրանից պահանջեց չմիջամտել տարածաշրջանի մյուս երկրների գործերին: Դրանից հետո Թեհրանում Թուրքիայի դեսպան Ռըզա Հաքան Թեքինը կանչվեց Իրանի ԱԳՆ՝ կապված տարածաշրջանային զարգացումների վերաբերյալ թուրք մի շարք պետական գործիչների արած և իրականությունից կտրված հայտարարությունների հետ: Հոկտեմբերին Իրանի ԱԳՆ-ն հայտարարեց, որ Իրանը պատրաստ է միջնորդի դեր կատարել Իրաքի և Թուրքիայի միջև, որոնց միջև վերջին շրջանում տիրում է մեծ լարվածություն:

Իրանի գազի ազգային ընկերության (*NIGC*) խոսնակ Մաժիդ Բոուժարզադեհը Ստամբուլում հայտարարեց, որ Իրանը ցանկանում է մեծացնել Թուրքիային մատակարարվող գազի ծավալը: Նա ընդգծեց, որ Իրանը ներկայում Թուրքիային օրական մատակարարում է 30 մլն մ³ գազ և կարևորելով Թուրքիայի աշխարհագրական դիրքը՝ չբացառեց, որ այն կարող է Եվրոպա փոխադրել իրանական գազը: Թուրքիայի Աղրը (Արարատ) նահանգի Դողուբայազեթ շրջանում պայթեցվեց Իրանից եկող գազատարը, ինչի հետևանքով մի քանի օրով դադարեցվեց իրանական գազի մատակարարումը: Հաղորդվեց, որ Ստամբուլի արդյունաբերական պալատը $10 մլրդ-ի ներդրում է անելու Իրանում՝ 500 հա տարածքում ստեղծելով արդյունաբերական գոտի, ինչը կլինի Իրանում օտար ծագմամբ առաջին արդյունաբերական գոտին: Անկարայում Իրանի դեսպանատունն իր քաղաքացիներին երկու անգամ կոչ արեց զերծ մնալ Թուրքիա այցելելուց, քանի որ այդ երկրի մի շարք քաղաքներում կտրուկ աճել է ահաբեկչական վտանգը:

Թուրքիա-Իսրայել, Եգիպտոս. Թուրքիայի ԱԳՆ-ն դատապարտեց պաղեստինյան տարածքներում 98 նոր տներ կառուցելու մասին Իսրայելի իշխանությունների որոշումը և Իսրայելին կոչ արեց ձեռնարկել այնպիսի քայլեր, որոնք կարող են վնասել կարգավորման գործընթացին: Թանժու Բիլգիչը հայտարարեց, որ Թուրքիայի կողմից Թել Ավիվում և Իսրայելի կողմից Անկարայում դեսպան նշանակելու գործընթացները կավարտվեն մոտ ժամանակներս:

Համաշխարհային էներգետիկ կոնգրեսին մասնակցելու համար Ստամբուլ ժամանեց Իսրայելի էներգետիկայի նախարար Յուվան Շտայնիցը, ինչը

վերջին 6 տարում («Մավի Մարմարա»-ի միջադեպից հետո) Իսրայելից Թուրքիա նախարարի մակարդակով առաջին այցն էր: Շտայնիցը Ստամբուլում հանդիպեց Բերաթ Ալբայրաքի հետ և քննարկեց Թուրքիային իսրայելական գազ, ինչպես նաև Պաղեստինի բնակիչներին էներգետիկ մատակարարումների թեման: Հանդիպման արդյունքներով Շտայնիցը հայտարարեց, որ Թուրքիան ու Իսրայելը շարունակելու են իսրայելական գազը Թուրքիայի տարածքով Եվրոպա հասցնելու հնարավորության մասին բանակցությունները: Թուրքիայի նախագահի խորհրդական Ջեմիլ Էրթոմը հայտարարեց, որ Թուրքիան ցանկանում է «Հարավային գազային միջանցք» նախագծին միացնել իսրայելական գազի մատակարարումները:

Էրդողանը հայտարարեց, որ Թուրքիայի և Եգիպտոսի հարաբերությունների կարգավորման մեկնարկը կախված է բանտից Եգիպտոսի նախկին նախագահ Մուհամեդ Մուրսիին ու նրա կողմնակիցներին ազատ արձակելու որոշումից, և որ Եգիպտոսի հետ առևտրային կապերի զարգացումը դրական քայլ կլիներ Թուրքիայի համար:

Թուրքիա-Ադրբեջան, Վրաստան. Հաղորդվեց, որ Վրաստանի իշխանությունները վրաց-թուրքական սահմանին սկսում են «Մարադիդի-Մուրաթլի» մաքսային նոր անցակետի կառուցումը: Թուրքիայի տրանսպորտի նախարար Ահմեթ Ալթանը հայտարարեց, որ Բաքու-Թբիլիսի-Կարս (ԲԹԿ) երկաթուղին շահագործման կհանձնվի 2017թ., ինչը կառուցման փուլում գտնվող երկաթուղային մյուս նախագծերի հետ միասին Թուրքիայի լոգիստիկ սեկտորին տարեկան միլիարդավոր դոլարներ կբերի: Ադրբեջանում Թուրքիայի դեսպան Էրքան Օզորալը հայտարարեց, որ Թուրքիան մտադիր է մինչև 2023թ. Ադրբեջանի հետ ապրանքաշրջանառության ծավալը հասցնել մինչև $15 մլրդ-ի:

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը մեկնեց Ստամբուլ՝ մասնակցելու Համաշխարհային էներգետիկ կոնգրեսին, որի մեկնարկից առաջ կարճատև հանդիպում ունեցավ Պուտինի և Էրդողանի հետ: Իլհամ Ալիևը Ստամբուլում հայտարարեց, որ Ադրբեջանը Թուրքիայի տնտեսությունում ներդրել է $20 մլրդ: Իսկ *SOCAR*-ի նախագահ Ռովնագ Աբդուլաևը հայտարարեց, որ մինչև 2023թ. Թուրքիայի էներգետիկ ոլորտում ներդրումները պետք է հասնեն $100-120 մլրդ-ի, և *SOCAR*-ը $18 մլրդ-ով կապահովի ներդրումների այդ ծավալի մոտ 20%-ը:

Նույն ամսին Էրդողանը շնորհավորական նամակ հղեց Իլհամ Ալիևին՝ Ադրբեջանի անկախության 25-ամյակի առիթով և հեռախոսազրույց ունեցավ նրա հետ: Իլհամ Ալիևն իր հերթին շնորհավորեց Էրդողանին՝ հոկտեմբերի 29-ին Թուրքիայի Հանրապետության հիմնադրման տարեդարձի առիթով: Ի.Ալիևը շնորհավորեց նաև Բինալի Յըլդըրըմին:

Մևլյութ Չավուշօղլուն ԵԽԽՎ-ում հայտարարեց, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը պետք է ակտիվացնի աշխատանքն՝ ուղղված Ղարաբաղյան հակամարտության կարգավորման փնտրտուքին, և կարևորեց «հայկական ուժերի դուրսբերումը» ԼՂ հարակից շրջաններից:

Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 7 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

Նշումների համար

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 25.11.2016թ.
Թիվ 9 (78), 2016թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «ԹԱՍԿ» ՍՊԸ տպարանում